


Պրոլետարներ բալոր յերկրների, միացե՛ք



Կազմեց լեվ խաբադեց

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ



Հե (բ)կեկ հրատարակչություն ժողովրդային հրատարակչություն

Ե Ե Բ Ե Գ, Ա. Կ.



Պատահաբար բոլոր յերկրների, միացեալ.

19 JUN 2009

07

7-50

ՅԵԽԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԸ

Կազմեց յեկ խմբագրեց

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԵ (Բ) ԿԵԿԻ հրատարակչություն ժողովրդային Հայաստան

ՅԵՐԵՎԱՆ

1936



19.07.2000

14970



34207-62

“ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ,,Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն-
Յերի Միության նոր Սահմանադրությունը, վորը մը-
շակել է ժողովուրդների հաննարեղ առաջնորդ մեծ
ՍՏԱԼԻՆԸ, վոչ միայն մամուլի ու խոսքի ազատու-
թյուն է տալիս խորհրդային ֆազախացուն, այլև ան-
հրաժեշտ միջոցներով ապահովում է այդ իրավունքի
գործնական ոգտագործումը:

Մեր ազատ, յերջանիկ և ուրախ յերկրում ապրող
խորհրդային ժողովուրդը մեծագույն ձգտում է ցու-
ցաբերում բանվորների և գյուղացիների սոցիալիս-
տական պետության կողմից իրեն տրված այդ իրա-
վունքն ավելի լայն ոգտագործելու, մեր մամուլին
ավելի ակտիվ մասնակցություն ունենալու համար:

Չնայած վերջին տարիներում մեր տպագիր (կենտ-
րոնական և շրջանային) թերթերի ֆանակը մի ֆանի
անգամ կրկնապատկվել է, այնուամենայնիվ, դրանով
զարձալ չի բավարարվում աշխատավորների անոզ
բուռն պահանջը, մեր տպագիր թերթերը դեռ հնա-
րավորություն չունեն տպագրելու այն տասնյակ հա-
զարավոր նամակներն ու քղբակցությունները, վո-
րոնք գրում են մեր սոցիալիստական յերկրի ազատ

Դիվանի № 2123, պատվեր № 1232, տիրաժ 4000

Յերևան Պետհրատի տպարան

ու յերջանիկ փաղափայտները: Այս հանգամանքը հաշ-
վի առնելով բոլշևիկների կուսակցությունը հսկայա-
կան նշանակություն է տալիս մեր ստորին մամուլին—
գործարաններում, կոլտնտեսություններում, յերկա-
քաղաքային տրանսպորտում, հանքերում, խորհրդանե-
սություններում և այլ վայրերում հրատարակվող
պատի բերքերին, վորոնք պրոպագանդիստական ա-
գիտացիոն, կազմակերպական ու դաստիարակչական
կարևոր աշխատանք են կատարում տվյալ վայրի ներ-
քին կյանքում:

Սակայն պետք է ընդգծել, վոր մեր ստորին մա-
մուլի աշխատանքը դեռ անհրաժեշտ բարձրության
վրա չի դրված և դրա հիմնական պատճառն այն է,
վոր մենք դեռևս, ինչպես հարկն է, չենք տիրապե-
տում այդ աշխատանքի տեխնիկային: Մեր ստորին
մամուլի աշխատողների մեծ մասը դեռ անձանք է
բոլշևիկյան մամուլի հիմնական սկզբունքներին, նրա
աշխատանքի հիմնական ձևերին ու մեթոդներին: Հենց
այդ բացը մեղմելու նպատակով է, վոր «ԽՈՐՀՐԴԱ-
ՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի խմբագրությունը հրատարակում
է այս գրքույկը, վորն ուղեցույց է հանդիսանալու
մեր ստորին մամուլի աշխատողների համար:

Գրքույկի նյութերն ընտրված են բանգյուղաբա-
կիցների կենտրոնական որգան «ԲԱՆԳՅՈՒՂԹՎԱԿԻՑ»
ժուրնալից:

Գրքույկն իր մեջ բովանդակում է ցեխային պատի
բերքի աշխատանքի հիմնական մոմենտները: Այդ
բերքի ամեն մի աշխատող և հատկապես նրա խմբա-

գիրն այս գրքույկից կարող է բավականաչափ գիտե-
լիքներ ստանալ իր աշխատանքի ձևերի ու մեթոդների
մասին և բերքի աշխատանքը հաջող կազմակերպելու
վերաբերյալ:

Գրքույկում անհրաժեշտ նյութեր կան պատի
բերքի աշխատանքը պլանավորելու, բանդաբակիցներ
հավաքագրելու և նրանց հետ դաստիարակչական աշ-
խատանք կազմակերպելու, բերքը ձևավորելու, քղ-
թակցություններն ուղղելու և մշակելու, բերքի վա-
ճի և մի քանի այլ հարցերի մասին:

Այս խնդիրները յուրացնելու դեպքում պատի
բերքի աշխատողը կարող է հաջող բերք հրատարա-
կել, իհարկե, յեթե նա սիրում է բերքի աշխա-
տանքը:

Գրքույկը, վոր գրված է հատկապես ցեխային
պատի բերքերի աշխատողների համար, կարող է ու-
զուտ բերել նաև գործարանային, կոլտնտեսային և
այլ վայրերում հրատարակվող պատի բերքերի աշ-
խատողներին:

Անհրաժեշտ է, վոր պատի բերքերի խմբագիրներն
ամպայման կարգան այս գրքույկը և դրա հիման
վրա վերականգնեն իրենց աշխատանքը: Գրքույկը
պետք է կարդալ նաև քղթակիցների հավաքույթնե-
րում, և դա նույնպես բավականաչափ կոզնի նրանց
քղթակցային աշխատանքին:

ԽՄԲԱԳԻՐԸ ՅԵՎ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՆԵԳԻԱՆ

Ընդունենք, թե վորոշված է գործարանի մի վորեն ցեխում պատի թերթի հրատարակել և կուսակցական կադմակերպությունն ել խմբագիրը և առաջադրել միանգամայն համապատասխան մի ընկերով: Կարելի՞ չէ արդյոք սրանով դոհանալ: Կարելի՞ չէ համաձայնել այն կարծիքի հետ, թե՝ պատի թերթի լավ խմբագիրը խմբագրական կոլեգիայի կարիք չի դրում:

Ի հարկե, վո՛չ: Միանգամայն սխալ է այն կարծիքը, թե պատի թերթի խմբագրական կոլեգիան խախտում է խմբագրի միանձնյա ղեկավարությունը սկզբունքը: Ընդհակառակն, պատի թերթի խմբագիրը լավ է հենց այն ժամանակ, յերբ նա կարողանում է կոլեկտիվի հետ միասին աշխատել, թերթի աշխատանքն այնպես ղեկավարել, վոր վորքան կարելի չէ ավելի մեծ թվով հետաքրքրվողներ համախմբվեն նրա շուրջը: Խմբագրի արժանիքը հենց այն է, վոր նա կարողանա ջրջապատել իրեն ակտիվով, կամավոր ոգնականներով, վոչ թե ամեն ինչ ինքն անի, այլ հետաքրքիր, ստեղծագործական աշխատանքով ծանրաբեռ-

նի նաև խմբագրական կոլեգիայի անդամներին, ակտիվ բանթղթակիցներին: Դա ունի և այն ոգուտը, վոր յերբ խմբագիրն իր շուրջը համախմբված դործունակ խմբկող ունի, նա ավելի լավ կարող է ղեկավարել թերթը, ավելի շատ ժամանակ կունենա մտածելու թերթի առաջ դրված խնդիրների և նրանց լուծման միջոցների մասին:

Հենց դրա համար ել պատի քերքի խմբագրական կոլեգիայի ընտրությունը քաղաքական կարևոր նշանակություն ունեցող գործ է հանդիսանում: Այստեղ շտապողականությունը վնասակար է: Խմբագրական կոլեգիայի ընտրությունն, ինչպես հարկն է, պետք է նախապատրաստել: Անմիտ ու վնասակար մոտեցում է, վոր յերբեմն խմբագրական կոլեգիա ընտրելիս մտածում են՝ այսինչին և այնինչին ընտրենք, քանի վոր նրանք ազատ են, ուրիշ գործ չունեն անելու:

Խմբագրական կոլեգիայի անդամություն յուրաքանչյուր թեկնածուի ծանր ու թեթև պիտի անել, մտածել, թե տվյալ անձնավորությունը վո՛րքան ոգտակար կլինի այդ աշխատանքում: Խմբագրական կոլեգիայի անդամությունն, ի հարկե, պատվավոր աշխատանք է, բայց այդ չպետք է տալ սրան՝ նրան՝ վորպես «պատվավոր կոչում»: Յեվ չի ել կարելի մտածել, թե՝ յեթե մեկին խմբագրական կոլեգիայի մեջ ընտրել չի կարելի, նշանակում է՝ նա վատ աշխատող է: Վո՛չ: Մեկը կարող է մի ուրիշ ասպարիզում շատ լավ աշխատող լինել, բայց խմբագրական կոլեգիայում անողուտ լինել: Հետևապես, խմբա-

գրական կոլեկիայի ընտրութեան ժամանակ պիտի մանրադնին քննել յուրաքանչյուր թեկնածուի նպատակահարմարութեան չափը:

Բայց ո՞ւմ, ինչպիսի մարդկանց ընտրել խմբադրական կոլեկիայի մեջ:

Ամենից առաջ ընտրութիւնը պետք է հեղինակութիւն ունենա տվյալ ցեխի բանվորներէ մեջ: Աշխատանքը՝ խմբադրական կոլեկիայում — հասարակական քաղաքական աշխատանք է, վոր անձնական վստահութիւն է պահանջում: Այդ աշխատանքի համար մարդ առաջադրելիս պետք է վստահ լինել նրա քաղաքական կայունութեանը, վստահ լինել, վոր նա դեռն կլինի թըշնամու վտանգութիւնների հանդէպ, վոր նա քրոնադատութիւնը կգնահատի նույնիսկ այն դեպքում, յետքէ այն ուղղված է իր դեմ կամ իր մօտ ընկերւղ գեմ: Պատահել է, որինսկ, այսպիսի մի դեպք. Կալինինի անվան հանքահորում պատի թերթի խմբագիր Լորովը հրաժարվել է թերթում տեղավորել մի թըղթակցութիւն, վորով քննադատվում էր նրա դրացին՝ աշխատանքի կարգապահութիւնը խախտելու համար: Պարզ է, վոր նման մօտեցում ունեցող անձնավորութիւնը խմբադրական կոլեկիայում ոգուտ տալ չի կարող:

Խմբադրական կոլեկիայի անդամն արտադրութեան մեջ որինակելի պիտի լինի. նա իր անձնական որինակով էս պետք է ցույց տա, թէ ինչպէս պետք է աշխատել և հենց դրա համար էլ նա բարոյական իրավունք կունենա քննադատելու ուրիշներին: Կարճ ա-

ռած՝ արտի թերթի ղեկավարութեան մեջ առաջատար դերը պետք է հանձնարարել ստախանովականներին: Նրանք պատի թերթի մեջ կարողացուին այն «կայծը», վորով իրենք աշխատում են դադդահի վրա: Նրանք արտադրութիւնը հաջողութեամբ կարմակերպելու տեսակետից չատ նոր ու կարևոր հարցեր կարծարծեն թերթի եջերում: Նրանք պատի թերթը կենդանի ու հետաքրքիր կդարձնեն:

Մյուս պայմանն այն է, վոր խմբադրական կոլեկիայի անդամութեան թեկնածուն հետաքրքրվի իր լինի բանթղթակցական աշխատանքով: Վոչ մի ոգուտ չի ստացվի, յետքէ խմբադրական կոլեկիայի մեջ ընտրվի այդ դործը չաիրող անձնավորութիւնը: Վոչ մի ոգուտ չի ստացվի, յետքէ նա ակի աշխատել վոչ թէ դործը սիրելով, այլ վորպէսզի կատարած լինի մի պարտականութիւն, վոր ոգուտ իր վրա յեն դրել:

Միաժամանակ նկատի պիտի ունենալ, թէ տվյալ անձնավորութիւնը կարող է արդյոք պահանջված չափով ժամանակ և ուժ արտադրել պատի թերթի աշխատանքներին, կարող է նվիրվել այդ դործին և պատասխանատու լինել նրա համար: Այլ խոսքով առած՝ պետք է հետաքրքրվել, թէ տվյալ ընկերն ուրիշ ինչ հասարակական պարտականութիւններ է կրում և արդյոք չափից դուրս չի՞ ծանրաբեռնված նա:

Թէ քանի հոգուց պիտի բաղկացած լինի խմբադրական կոլեկիան — դրա համար վոչ մի կանոն չկա և չի ևլ կարող լինել: Այդ կախված է տվյալ կոլեկ-



տիվի մեծությունից և թերթի լույս ընծայման հաճախականությունից:

Հաճախ հարց ե տրվում, թե անհրաժեշտ ե ուրդոք, վոր խմբագրական կոլեգիան Բերկայացուցչական սկզբունքով ընտրվի, այսինքն, վոր նրա մեջ ներկայացուցիչներ լինեն տվյալ ցեխի բոլոր բաժիններից: Պետք ե ասենք, վոր այդ պարտադիր չե: Խմբագրական կոլեգիայի անդամներին պետի ընտրել անհատորեն: Ի հարկե, վատ չի լինի, յեթե այդ հիմնական պայմանը պահպանելով խմբագրական կոլեգիայի մեջ ընտրվի ցեխի բոլոր բաժիններից, բայց այդ պարտադիր պահանջ չե:

Խմբագրական կոլեգիան պետք ե ընտրել տվյալ ցեխի բանվորների ժողովում: Վորքան շատ բանվորներ մասնակցեն այդ ժողովին և վորքան ակտիվորեն նրանք քննարկեն առաջադրված թեկնածությունները, այնքան ավելի լավ:

Ահա, խմբագրական կոլեգիան ընտրված ե. ինչից սկսել աշխատանքը:

Պետք ե սկսել աշխատանքի բաժանումից: Խմբագրական կոլեգիայի յուրաքանչյուր անդամը պետք ե իմանա, թե պատի թերթի աշխատանքի վոր մասի համար ե ինքը պատասխանատու: Այնպես պիտի անել, վոր խմբագրական կոլեգիայի յուրաքանչյուր անդամն ըստ հնարավորին այնպիսի աշխատանք ըստանա, վորն ամենից շատ ե համապատասխանում նրա ընդունակություններին ու ցանկություններին: Այդ դեպքում նա աշխատանքն ավելի լավ կկատարի:

Որինակի համար, կարելի յե խմբագրական կոլեգիայի յուրաքանչյուր անդամին հանձնարարել, վոր վորոչ ժամանակի ընթացքում պատի թերթում լուսաբանի այս կամ այն խնդիրը: Մեկին, որինակ, կարելի յե հանձնարարել աշխատավայրի կազմակերպման հարցերը, մյուսին՝ ցեխին դործիքներ և նյութեր մատակարարելու հարցը, յերրորդին՝ բանվորական կոլեկտիվի կենցաղային հարցերի լուսաբանումը, չորրորդին՝ աշխատանքի համաձայնեցվածությունը՝ ու ժանդակ ու խառն ցեխերի միջև և այլն:

Մոտավորապես այս ուղին բռնեց «Ժողովուրդ» պատի թերթի խմբագրական կոլեգիան. այդտեղ խմբագիրն անմիջականորեն իր ձեռքն առավ ստախանոփյան չարժման հարցերը, խմբկոլի անդամներից մեկը ղեկավարում ե արհմիութենական աշխատանքի լուսաբանումը, մյուսը հետևում եր ցեխում կատարվող կամավոր ընկերությունների աշխատանքին և այլն:

Կարելի յե նաև վոչ թե խմբկոլի անդամներին յերկար ժամանակով կցել վորոչապի հարցերի, այլ նրանցից յուրաքանչյուրին հանձնարարել թերթի հերթական համարի վորեւե մասի նախապատրաստությունը:

Կարելի յե աշխատանքի մի ուրիշ մեթոդ. ես ընդունել. խմբկոլի յուրաքանչյուր անդամին կցել ցեխի առանձին բաժնին, խմբկոլի վորեւե անդամին հանձնարարել, վոր հետեւի կարելվորագույն պատվերների կատարմանը և այլն: Նույն ձևով կարելի յե բաշխել նաև մյուս բնագավառները— կարմիր անկյուն, գրա-

դարան, ճարարան, հանրակացարան, ինքնագործ խմբակներ, տեխնիկում և այլն:

Կրկնում ենք, պարտավորությունների բաշխման պանսղան ձևեր կարող են լինել: Միայն անհրաժեշտ է, վոր խմբիկի յուրաքանչյուր անդամը, բացի անմիջականորեն իր բնագավառին պատասխանատու լինելուց, միաժամանակ իրեն պատասխանատու դիտարկող թերթի աշխատանքի համար: Իսկ դրա համար խմբիկի անդամները չպետք է սահմանափակվեն միմիայն իրենց հանձնարարված խնդիրներով: Հարկավոր է, վոր հետաքրքրվեն ամբողջ ցեխի կյանքով և խմբիկի մյուս անդամների աշխատանքով ևս:

Խմբիկի անդամների կազմից պետք է առաջ քաշվի խմբագրի տեղակալ, վորն սոսնս ըսպե կարողանա փոխարինել խմբագրին, և քարտուղար, վորը պիտի հոգ տանի պատի թերթի «տնտեսություն» մասին, պահի նրա արխիվը, թերթի անընդմեջ հրապարակումն ապահովի թղթով, ներկերով, հաշվի առնի ստացվող թղթակցությունները: Վորոչ ընկերների պետք է հանձնարարել պատի թերթի արտաքին ձևավորման հոգսը, թղթակցությունների լեզվի ուղղումը և այլն: Ձի խանդարի, վոր մեկ-յերկու ընկեր առանձնացվեն՝ չարունակ հսկելու համար թղթակցությունների գործունեությունը:

Ինչպես փորձը ցույց է տվել, ամեն ոք լույս տեսնող պատի թերթերում նպատակահարմար է կադմակերպել հերթափոխային բրիգադներ: Դրա էությունն

այն է, վոր խմբագրական կոլեգիան բաժանվում է մի քանի բրիգադի, վորոնք հերթով լույս են ընծայում պատի թերթը: Յուրաքանչյուր բրիգադն ունենում է իր հերթական խմբագիրը: Գա համարյա թե պատասխանատու խմբագրի տեղակալն է, վոր պատասխանատու լիանը: Սակայն և՛ ամբողջ թերթի, և՛ յուրաքանչյուր համարի նախնական պլանը քննությունն և առնում խմբագրական կոլեգիայի ամբողջ կազմը:

Վորպեսզի խմբագրական կոլեգիան հաջող աշխատանք կատարի, խմբագիրը պետք է բոլոր կարևոր հարցերը քննելու համար խմբիկի նիստ հրավիրի: Թեկուզ և այդ նիստերը կարճ լինեն, թեկուզ հինգ րոպե տևողությամբ, սակայն խմբիկի անդամները պետք է հավաքվեն՝ միասնաբար քննարկելու համար պատի թերթի կատարած ու կատարելիք աշխատանքը:

Վոր գեղեցիկ և ինչի՞ համար պիտի հավաքվի խմբագրական կոլեգիան:

Նախ՝ խմբագրական կոլեգիան կարող է կանոնավորապես քննարկել մտապես աշխատանքի պլանը: Սյու պլանում պետք է նախատեսվեն այն հիմնական հարցերը, վորոնք յենթադրվում է արծարծել պատի թերթում, ինչպես և մասսայական աշխատանքը բանթրդթակիցների ու ընթերցողների մեջ:

Բացի ընդհանուր պլանի քննարկումից, խմբագրական կոլեգիան քննարկում է նաև հերթական համարի

պլանը: Սրա նախագիծն արդեն ավելի վորոշակի պի-
տի մշակված լինի. պետք է նախատեսել վոչ միայն
արծարծելիք հարցերը, այլև ճշգրիտ թեման և հե-
ղինակ բանթղթակիցները:

Այդպիսի նիստերում կարելի չե կոլեկտիվ կեր-
պով քննել ստացված թղթակցությունները և վորոշել,
թե վո'րը պիտի թերթում տեղավորվի, վո'րը պիտի
նախորդ ստուգվի, վո'րը վերամշակել հեղինա-
կի հետ, վո'րը հանձնել կուսկադմակերպության քըն-
նությանը, և վո'րի ուղտադործումից բոլորովին հրա-
ժարվել: Այդպիսի դեպքեր ել կարող են լինել: Յեն-
թադրենք թե ստացվել է անհիմն կամ խնդիրը սխալ
լուսաբանող թղթակցություն: Սակայն այդպիսի դեպ-
քերում ել անպայման պիտի խոսել հեղինակի հետ և
նրան բացատրել, թե թղթակցությունն ինչու չի
ստվում, թե ինչ հետաքրքիր հարցի մասին պետք է
դրել:

Ծառ ուղտակար ե խմբկոլի և բանթղթակիցների
ու ընթերցողների միացյալ խորհրդակցություններ
հրավիրելը՝ թերթի արդեն լույս տեսած մեկ կամ մի
քանի համարները քննարկելու համար: Այդ խորհրդակ-
ցություններում կխոսվի ու կսարկվի, թե թերթի
լույս տեսած համարներում ի'նչն է լավ, ի'նչն է թե-
րի, ի'նչ կարելիոր խնդիր ե թերթին անուշադրության
մասունք և այլն:

Դրանից անկախ խմբկոլն ել կարող ե իր նիստե-
րն ունենալ՝ ցեխի կամ յերկրի կյանքում ծաղած

նոր խնդիրների կապակցությամբ թերթի պլանը
վերանայելու համար, վորեւ կամպանիայի անցկաց-
ման պլանը մշակելու համար և այլն:

Վորպեսզի խմբկոլը տեղյակ լինի, թե ցեխի հո-
սարակայնությանն ինչ խնդիրներ ե հետաքրքրում,
վորպեսզի նա կարողանա ժամանակին լուսաբանել
այդ խնդիրները թերթում, նպատակահարմար և ող-
տակար ե հրավիրել խմբկոլի ընդշայնած նիստ՝ տար-
բեր պրոֆեսիայի, ցեխի տարբեր մասերի բանկորնե-
րի հետ միասին:

Խմբադրական կոլեկիայի կոլեկտիվ աշխատանքը
միայն նրա խորհրդակցություններում չե, վոր կատար-
վում ե: Խմբկոլի յուրաքանչյուր անդամ ամեն հար-
մար առիթով պետք ե անհատական ու խմբակային
զրույցներ կադմակերպել ընթերցողների հետ, առաջար
կություններ հավաքի թերթի բարելավման մասին,
ուշադիր լինի դեպի բոլոր քննադատությունները:

Խմբկոլի յուրաքանչյուր անդամն սրյնպես պիտի
աշխատի, վոր նրան ցեխում նախաչեմ վորպես խմբկո-
լի անդամ:

Խմբկոլի յուրաքանչյուր անդամի դերը կարեոր ե
նաև թերթի համար բանթղթակիցներ հավաքողը-
լու գործում: Չպետք ե մոռանալ, վոր յեթե պատի
թերթը թղթակցություններ չի ստանում, այդ նշա-
նակում ե խմբադրական կոլեկիան վատ ե աշխա-
տում:

Հաճախ պատահում ե, վոր խմբադիրը հիման-
դանում ե, արձակուրդ ե դնում կամ փոխադրվում

ե մի ուրիշ ցեխ և ահա, պատի թերթը դադարում
է լույս տեսնել: Կան մարդիկ, վորոնք նույնիսկ
պարծենում են դրանով, թե ահա, տեսե՛ք յետ ինչպիսի
սի աշխատող եմ. բախական ե, վոր վոտքս քաշեմ
և թերթն ալլես լույս չի տեսնի:

Բայց մի՞թե սա պարծենալու բան ե: Մի՞թե՞ լավ
է այն խմբագիրը, վոր ամբողջ աշխատանքն իր
բուռն ե հավաքել և միայն ինքն ե անում:

Պատի թերթը, ինչպես և ամբողջ բողջեվիկյան
մամուլը կոլեկտիվ աշխատանքի ստույգ պիտի լինի:
Միայն այդ դեպքում նա կկարողանա կատարել իր
խոշոր դերը: Մյուս կողմից չպետք ե մոռանալ, վոր
խմբագրական կոլեգիան լրագրային աշխատանքի մի
հիմնալի դպրոց ե. լավագույն խմբկոլններն արդեն
քիչ տաղանդավոր մարդիկ չեն առաջ քաշել իրենց
չարքերից, վորոնք այժմ մամուլի կարող աշխատա-
կիցներ են դարձել:

Ի հարկե, լինում ե նաև, վոր խմբկոլը չի աշ-
խատում, վորովհետև անհաջող ընտրություն ե կա-
տարված լինում: Սակայն ավելի հաճախ պատահում
է, վոր խմբագիրը չափից ավելի մեծ հույս ե դնում
իր վրա և չի ուզում աշխատանքի մեջ քաշել խմբկո-
լի անդամներին, չի կարողանում աշխատանքը ճիշտ
բաշխել նրանց միջև և հետևել նրանց կատարմանը:
Մինչդեռ խմբագրի հիմնական խնդիրը հենց այդ ե:

Յեթե խմբագիրը խմբկոլի յուրաքանչյուր անդա-
մին փորձով տուգելուց հետո համոզվի, վոր իրաք
խմբկոլն անաշխատունակ ե, նա պետք ե վերընտ-

րության խնդիր դնի: Յեթե խմբագիրն այդ հարցը
լրջորեն դնի և իր հայտարարությունը փաստերով
հիմնավորի, կուսակցական կազմակերպությունը կող-
նի նրան և վերընտրություն կնշանակի, խմբկոլի ան-
աշխատունակ անդամների փոխարեն կընտրվեն աշխա-
տունակ ընկերներ և դործն առաջ կդնա:

Նույնը պիտի անեն նաև խմբկոլի անդամները,
յեթե համոզվեն, վոր ինքը՝ պատի թերթի խմբագրի-
րը բարեխիղճ աշխատող չէ:

Ի հարկե, չառ դովելի յի այն խմբկոլը, վորի
անդամներից յուրաքանչյուրը շատ լավ դիտի իր պար-
տականությունները և կատարում ե անթերի: Սա-
կայն միայն խմբկոլը դործը գլուխ բերել չի կարող,
յեթե շարունակ չգիտի աշխատանքի մեջ քաշել նաև
ցեխի բանվորներին: Խմբագրական կոլեգիան չպետք
է կղղիանա ինքն իր մեջ, նա պետք ե իր շուրջը
համախմբի ակտիվ բանվորներին— բանթղթակիցնե-
րին: Շատ լավ կլինի, յեթե խմբկոլը բանթղթակից-
ներին մասնակից դարձնի պատի թերթի ձեվավորման
և լույս ընծայման աշխատանքներին: Դրանից թղթա-
կիցները շատ բան կսովորեն:

Պատի թերթի աշխատանքի հիմքը ինֆուսկնտա-
տուքյունն ե: Խմբագրական կոլեգիան պետք ե լի-
վին քննության առնի այս կամ այն ձեվով յեղած
քննադատությունը, թերթում թույլ տված սխալները
և միջոցներ ձեռք առնի նրանց կրկնությունը կան-
խելու համար:

Խմբկոլը պետք ե հետևի, վոր բանթղթակիցները

Յեկային պատի թերթ—2

չզցեն իրենց հեղինակութունը, անկարգ քայլեր չառնեն և արտադրանքի խոտան չտան, չկտրվեն տեսուչութից: Խմբկողի անդամներն ու բանթղթակիցները ցեխում առաջավոր ու որինակելի աշխատողներ պիտի լինեն:

Խմբկողը պետք է պարբերաբար հաշիվ տա իր աշխատանքի մասին բանթղթակիցներին ու ընթերցողներին, խմբկողի հաշվետվությունը պետք է դնել նաև կուսակցության ժողովում:

Սոչոր նշանակություն ունի նաև խմբկողի վերընտրության կամպանիան, խմբկողի կազմի թարմացումը՝ նոր առաջ քաշված ակտիվ բանթղթակիցներով:

Խմբկողի վերընտրության համար հաստատուն ժամկետներ չեն սահմանված: Այդ կարելի չե անել մամուլի որվա առթիվ, թերթի հոբելյանի առթիվ, այլալ խմբկողի աշխատանքի մեկ տարին լրանալու դեպքում և այլն: Քանի վոր խմբկողի աշխատանքի գնահատման հիմնական պայմանը նրա լույս ընծայած թերթերի վորակն է, ապա ուրեմն՝ վերընտրությունից առաջ պետք է հրավիրել ընթերցողների կոնֆերանսներ:

Մի վերջին դիտողություն ևս: Խմբադիրը և խմբկողի յուրաքանչյուր անդամը, վորպեսզի կարողանան ընթերցողի աճող պահանջներին համապատասխանող թերթ լույս ընծայել, մեծ աշխատանք պիտի կատարեն իրենց քաղաքական կուլտուրական մակարդակը

բարձրացնելու ուղղությամբ: Խմբկողը պետք է հետևի, վոր իր յուրաքանչյուր անդամը սովորի, կարդա և՛ քաղաքական, և՛ իր մասնագիտությունը վերարերող զրքեր, և՛ դեղարվեստական գրականություն, և՛ անպայման՝ թերթեր:

ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ՊԼԱՆԸ

Յուրաքանչյուր պատի թերթ պիտի ունենա իջ աշխատանքի պլանը: Այդ աշխատանքի ճիշտ կադմակերպման կարելիորագույն միջոցն է: Պլանը խմբադրական կոլեկտիվին հնարավորութիւն կտա ընդդէմու արտադրութեան, կուլտուրայի ու կենցաղի եիմնական հարցերը, նախորոք նշելու, թե պատի թերթում ինչ կամպանիաներ են անցկացվելու: Միաժամանակ պլանը խմբադրական կոլեկտիվի անդամների ու ակտիվի միջև աշխատանքը բաժանելու լավագույն միջոցը կհանդիսանա:

Ինչպէ՞ս պիտի սկսել պատի թերթի պլանը կադմելու աշխատանքը:

Ամենից առաջ պետք է ուսումնասիրել ցեխի յայնքը: Լավը կլինի այն պլանը, վոր կարտացոլի այդ կյանքն իր բոլոր կողմերով, կընդգրկի խոշորագույն զեպքերը, ժամանակին կարձադանքի կուսակցութեան ու կառավարութեան վորոշումներին:

Պլանը կադմելիս մեծ տեղ պիտի հատկացնել ստախանովականների առաջնորկութիւններին, նրանց փոքի պրոպաղանդին, բանվորների պահանջներին:

Թերթի պլանի համար թեմաներ ընորելիս՝ խմբադրական կոլեկտան իրեն հիմնական նպատակը պի-

տի համարի ողնել իր ցեխի ղեկավարութեանը՝ կիրառելու կուսկադմակերպութեան վորոշումները:

Դրա համար անհրաժեշտ է պատի քերքի պլանը համապատասխանեցնել կուսկադմակերպութեան պլանի հետ: Միայն այդ միջոցով խմբադրական կոլեկտան կկարողանա իր պլանում արտացոլել այն խնդիրները, վոր զնում է կուսկադմակերպութեանը:

Իհարկէ, չպետք է ընդորիմակել կուսկադմակերպութեան պլանը և մխանիկորեմ փոխադրել այն պատի թերթի պլանի մեջ: Խնդիրն այն է, վոր յենելով կուսկադմակերպութեան պլանից՝ ցուցակում նշվեն այն թեմաներն ու միջոցները, վորոնք պիտի լուսաբանի պատի թերթն իր բանթղթակիցների ողնութեամբ:

Պետք է ասել, վոր վորոշ պատի թերթերի խմբադիրներ միանդամից ճիշտ չեն մոտեցել պլան կադմելու խնդրին: Որինակ, մի խմբադիր ախսիսի պլան է կադմել. վորոշել է մի ամսվա ընթացքում տեղավորել մոտ 30 թղթակցութեան ցեխի ղեկավարներից, կադմակերպելարշավ, մի քանի անդամ՝ բանթղթակցական ժողով և այդ նույն ամսին թերթը դարձնել ամենորայ:

Սա ուսալ պլան չէ: Ախտեղ հաշիի չեն առնված պատի թերթի կոնկրետ պայմաններն ու հնարավորութիւնները, չի նշված, թե ախ կամ այն աշխատանքն ով պիտի կատարի: Նշված են բադմաթիվ թեմաներ, սակայն չեն նշված հեղինակների անունները: Պլանում ախսիսի մի կետ կա. «Պայքար ծաւա-

ընդ պատի թերթերի կոնկուրսում առաջնութիւն չա-
հելու համար»։ Բայց ի՞նչպէս պայքար ծավալել, ո՞ւմ
աղնությամբ, վո՞րպիսի ժամկետներում, — այս ամենը
չի ասված։ Յեթե պատի թերթը ցանկանում է վորե-
վէ կամպանիա անցկացնել, ապա պլանում անհրա-
ժեշտ է նախատեսել և՛ դրա նպատակի ու խնդիր-
ների պարզարանման ժամանակը, և՛ կազմակերպչա-
կան աշխատանքը, վոր թերթը պիտի կատարի այդ կամ-
պանիայի կապակցութեամբ և այդ կամպանիայի ըն-
թացքի հետևողական լուսարանումը և վերջապէս կամ
պանիայի արդյունքների ամփոփումը։

Վերոհիշյալ վոչ ունալ պլանը կազմող ընկերը
մենակ է դործել։ Նա մտածել է, վոր կարելի չե-
յոլա զնալ նաև առանց խմբիլի անդամների, առանց
բանթղթակիցների։ Պլանը կազմվել է շատապ կար-
գով, ձղձոված և չմտածված։

Հաշի առեք այս սխալը։ Պլանը պետք է կազմ-
վի կոլեկտիվ կերպով։ Շատ ոգտակար է այդ գոր-
ծին մասնակից անել ակտիվ բանթղթակիցներին
ու պատի թերթի ընթերցողներին։

Լավագույն պատի թերթը պլանը կազմում է հե-
տեվյալ ձևով. խմբադիրը կուսկազմակերպութեան
պլանն ուսումնասիրելով՝ պատի թերթի պլանի նախա-
գիծ է կազմում։ Այս նա խմբագրական կոլեգիայի
նիստ է հրաւիրում, վորպէսզի պլանի նախագիծը
միասնաբար քննեն ու լրացնեն։ Կոլեկտիվ ձևով ա-
վելի հեշտ է խորամուխ լինել բարդ ու բազմակողմա-
նի կյանքին և բազմաթիվ հարցերի միջից անջատել

այն ամենաեղանակները, վորոնք վճռական նշանակա-
թիւն ունեն ցելի աշխատանքների համար։

Ընդունենք, թե խմբագրական կոլեգիան նիստ է
գումարել պատի թերթի պլանը կազմելու համար։
Հարց է առաջանում — ի՞նչ գրել պլանում, վո՞րտե-
զից ճարել հարցերն ու թեմաները։

Պատի թերթի հիմնական նյութերը բանվորների
քղբակցութեանն են։ Նրանց մեջ շատ կարևոր
հարցեր են արծարծվում, հենց նրանցից էլ պետք է
սկսել։

Խմբագիրը սեղանին է դնում մի քանի թղթակի-
ցութիւն, վորոնք ստացվել են թերթի հերթական
համարի համար։ Մի թղթակցութեան մեջ խոսվում
է բանվորների քաղաքական-կուլտուրական մակար-
դակի բարձրացման և ցելում կատարվող կուլտ-աշ-
խատանքի թուլութեան մասին։ Շատ լավ թեմա չե-
խմբելոյն այդ մտցնում է պլանի մեջ։

Մյուս թղթակցութիւնը խոսում է նրա մտոյն,
թե ինչպէս բանվորներն աշխատանքի ստախանոյլան
մեթոդին անցնելուց հետո նրանց վատաւար խիստ
աւելացել է։ Այս թեման ևս պլանի մեջ է մտցվում։

Պլանի քննարկման ժամանակ խմբագրական կոլե-
գիան իմանում է, վոր ցելում յերևան է յեկել մի
նոր ստախանոյլական, վորն աշխատանքի բարձր ար-
տադրողականութեան նոր ուկիդը է սահմանել։ Խիստ
կարևոր տեղեկութիւն է այս։ Սա խոսում է ստախա-
նոյլան շարժման ել ավելի զարգացման մասին։ Յեւ
խմբագրական կոլեգիան պլանի մեջ է մտցնում մի

նոր թեմա— «ցույց տալ նոր ստախանովականի աշխատանքի մեթոդները»:

Այնուհետև խմբելով պլանի մեջ և մտցնում այն առավել կարևոր հարցերը, վորոնք բարձրացվել են և պիտի բարձրացվեն արտադրական ու կուսակցական ժողովներում: Յեխային ու բրիգադային ժողովներում արժեքավոր առաջարկություններ և քննադատական դիտողություններ են արվում, վորոշումներ են ընդունվում և այլն:

Խմբելով անդամներն ուշադիր կերպով պիտի լսեն բանվորների առաժները, ստուգեն տեսածներն ու լրագրեն և դրի առնեն այն ամենը, ինչ անհրաժեշտ և հրապարակել թերթում:

Կուսակազմակերպության պլանն ու վորոշումներն այն կարևորագույն նյութն են, վորից խմբելով թեմաներ ու հարցեր պիտի քաղի իբ պատի թերթի համար:

Անհրաժեշտ է պատի թերթի պլանը կազմել տնօրենի և նյութի հիման վրա, իր իսկ արտադրության կյանքից վերցրած ցայտուն փաստերի ու որինակների հիման վրա: Յեթե, որինակ, պատի թերթը վորոշում է պայքար ծավալել բանվորական մասսային տեխնոսոցման ցանցի մեջ ընդդրվելու համար, ապա նա իր պլանում ճշտորեն պիտի նշի այն մարդկանց անունները, վորոնց մասին պիտի դրի այս կապակցությամբ:

Խմբադրական կոլեգիան պատի թերթի պլանի համար թեմաներ քաղում է կյանքից, բանվորներից,

առախանովականներից, կուսակցության ու կառավարության վորոշումներից:

Բայց ահա պլանի համար հարցերն ընտրված են: Ի՞նչ անել այժմ:

Կարծես թե մնում է միայն դրել պլանը, ձեռնկերպել թղթի վրա:

Բայց այստեղ անխուսափելիորեն խմբելով առաջ հարց է ծագում—վերա՞ն ժամանակվա պլան կազմել:

Այս հարցը լուծելը դժվար չէ: Պետք է կազմել մոտ մի սոսակա պլան:

Այդպիսի պլանը կապահովի կարևորագույն հարցերի կապակցված ու հետևողական լուսարարումը: Պլանի համաձայն յուրաքանչյուր հաջորդ համարը տերտորեն կապված պիտի լինի նախորդ համարի հետ: Պատի թերթը պետք է անդրադառնա նախապես արծարծած հարցերին, հիշեցնի իր սպառնալից թղթակցությունների մասին, աշխատի դրական արդյունքների հասնել: Պլանը կազմելիս այս ամենը պետք է հաշի առնել:

Ձի կարելի թույլատրել այնպիսի մի դրություն, վոր պլանը նախատեսի լուսարարել աշխատանքի միայն մի վորեւս բնադավառ, որինակ՝ միայն արտադրությունը կամ՝ բանվորների կենցաղը: Արտադրության, կուսակցական աշխատանքի, բանվորների կուլտուրական ու կենցաղային հարցերի միջև անքակտելի կապ գոյություն ունի: Դրա համար էլ հարցերը պիտի վերցվեն նրանց փոխադարձ կապակցությամբ, վորպեսզի կուլտուրական աշխատանքն ուժանդա-

կի արտադրական պլանների կատարմանը, իսկ աշխատանքի արտադրողականութեան բարձրացումը բարելավի կուլտ-կենցաղային աշխատանքը:

Հաշվի առնելով այս, պատի թերթի խմբիկը պլանը կազմում է վորոշակի ժամանակի համար: Յեթե թերթը հինգ որը մեկ է լույս տեսնում, ապա խմբիկը հինգ համարի ղլխավոր թեմաներ է նշում:

Ամենորյա պատի թերթի խմբիկը մի քիչ այլ կերպ է կառուցում իր պլանը. ամսական պլանում նա նշում է միայն այն ամենահիմնական հարցերը, վորոնք վորոշում են թերթի ղլխավոր ուղղութիւնը: Հերթական համարների ալեւի մանրամասն պլանը կազմում է պատասխանատու խմբադիրը՝ հերթափոխութեան խմբիկոյնների հետ միասին: Փորձը ցույց է տալի, վոր ամենորյա պատի թերթի համար ալեւի նպատակահարմար է ընդհանուր պլան ունենալ մի ամսվա համար և կոնկրետ պլաններ՝ հնգորյակների համար: Սա նրա համար է կարեւոր, վոր յուրաքանչյուր հերթափոխութեան խմբադիր իմանա, թե ինքնինչ թեմաների մասին պիտի նյութեր ընտրի այն համարի համար, վորի լույս ընծայմանը պատասխանատու յե ինքն անձամբ:

Դիտենք, որինակ, Բելոռուս և Բալտիական յերկաթուղու պատի թերթերի խմբադիրների դասընթացների կազմած հնգորյա պատի թերթի պլանը: Այդ պլանը բաժանալած է յերկու մասի. առաջինում նշված են պատի թերթի հիմնական թեմաներն ու հարցերը մի ամսվա համար, յերկրորդ մասը հնգորյա պատի

թերթի մոտաւայ 3 համարների պլանն է, վոր կազմված է ամսական պլանի հիման վրա:

Ահա այդ պլանի պատկերը.

Թեմաներ	Ինչպե՞ս և ու՞մ ոգնութեամբ է նյութ ընտրվում	Լույս ընծայելու ժամկետը
Ստախանովական Վիմ Սիմոնովի, Ռուշովի, Չեկաւենի և Ռի փորձ. Սմիրնովի հետ: Չրույցները կազմակերպում են խմբիկի անդամներ Ուսաչևը և Նեյշևը. Բանթղթակիցներ Վասիլևի և Գրիմուսենի հետ:	Չրույցներ կազմակերպել ստախանովական Վիմ Սիմոնովի, Ռուշովի, Չեկաւենի և Ռի փորձ. Սմիրնովի հետ: Չրույցները կազմակերպում են խմբիկի անդամներ Ուսաչևը և Նեյշևը. Բանթղթակիցներ Վասիլևի և Գրիմուսենի հետ:	10 փետրվարի
Ստախանովական Վիմ Սիմոնովի և Բանթղթակիցներ Վասիլևի և Գրիմուսենի հետ:	Ստախանովական Գորենի թղթակցութիւնը, վոր վաստակել է ամսական 1200 ռուբլի, սակայն մեր խանութում չի կարողացել դնել իրեն անհրաժեշտ ապրանքները: Խանութի վարիչի և վաճառողների թղթակցութիւնները՝ ապրանքների ժամանակավոր արկասութեան մասին: Բանթղթակիցներ Կերելովի և Վոլդինի թղթակցութիւնները՝ բանվորների պահանջների աճման մասին:	15 փետրվարի
Ստախանովական Վիմ Սիմոնովի և Բանթղթակիցներ Վասիլևի և Գրիմուսենի հետ:	Խմբիկի անդամներ Նեյշևովն ու Սիրինը ստախանովականներին հարցնելով անկետային կազմում, թե՛ նրանք ինչ պահանջներ են առաջադրում մեր բան-մարտակարարման բաժնին:	
Ստախանովական Վիմ Սիմոնովի և Բանթղթակիցներ Վասիլևի և Գրիմուսենի հետ:	Կուսակազմակերպիչ ընկ. Գուսկովի հոդվածը: Լավագույն ստախանովական-կոմունիստ ընկ. Սերգենի դրական փորձը (զրուս է խմբադիր ընկ. Ոսկինը): Բանթղթակիցների քննադատական ղիտոնութիւնները՝ ստախանովյան շարժումից հետո կանգնած կոմունիստների մասին:	20 փետրվարի

Վո՞րն է այս պլանի արժանիքը:

Սա կոնկրետ պլան է և հաշվի յե առնված, վոր կարելի յե կատարել խմբկողի ու նրա ակտիվի ուժեքով: Այս պլանում նշված է վոչ միայն թեման, այլ և այն, թե այդ թեման ինչպե՞ս պիտի լուսաբանվի, ինչ մեթոդով պիտի նյութն ընտրվի, ով պիտի գրի այս կամ այն թղթակցությունը:

Հասկանալի յե, վոր վոչ մի պլանում չի կարելի նախատեսել այն բոլոր հարցերը, վորոնք կարող է սուղադրել կյանքը: Պլանի խնդիրն է— ուղղություն տալ պատի թերթին, նախատեսել գլխավոր հարցերի լուսաբանումը՝ պատի թերթի հերթական համարներում:

Հերթական համարում առանց ձգձգելու պիտի տեսնվորել նաև այն թղթակցությունները, վորոնք պլանով չեն նախատեսված. կյանքը շարունակ նորանոր թեմաներ է առաջ քաշում, վորոնք լրացնում են պլանով նախատեսած հիմնական խնդիրները: Ասենք թե պլանը կազմելուց հետո հրապարակված է կուսակցության նոր վորոշումը: Նշանակում է, հարկավոր է վերահասարակել, լրացնել պլանը, իսկ անհրաժեշտության դեպքում հիմնովին փոխել:

Թերթի առանձին համարի պլանը նպաստում է այդ նոր հարցերը հաշվի առնելուն:



Պլան կազմելու գործում պատի թերթի խմբագիրը ղեկավար դեր է խաղում: Նրա պարտականու-

թյունն է հրահրել խմբկողի յուրաքանչյուր անդամինախանձեռությունը՝ թերթի համար թեմաներ ընտրելու գործում: Լավ խմբագիրը մշտական կապ է պահպանում կուսկազմակերպչի հետ, ցեխի վարչության հետ և բանվորների հետ: Նա ակտիվորեն մասնակցում է կուսակցական և արտադրական աշխատանքին, ուսումնասիրում է ցեխի կյանքը և ձգտում է ամեն մի հետաքրքիր բան արտացոլել իր թերթում:

Ամեն մի ցեխի կյանքը շատ բաղադրան է: Մի մարդու համար դժվար է ընդգրկել ամբողջը: Խմբագիրն այդ յերեկոյթները պետք է գրի առնի, վորպեսզի նրանք չվրիպեն իր տեսադաշտից:



Ինչպե՞ս մեր ասածներից յերևում է, պլան կազմելը պատասխանատու գործ է, սակայն նրա ուղուտե էլ հսկայական է: Պլանը գործողության հիանալի ղեկավարությունն է: Պլանով աշխատող խմբկողը կապահովի իրեն պատահականություններից, թափթուփածությունից և աշխատանքի ինքնահոս վիճակից: Պլանի ողնությամբ խմբկողը կկարողանա տեսնել վոչ միայն այսօրվա խնդիրները, այլ և կնայի իր ցեխի վաղվա որվան:

ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒ- ԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՆՐԱՆՑ ՄԵԶ

Պատկերացրե՛ք ձեզ մի պատի թերթ, վոր լույս է ընծայում միմիայն խմբագիրը: Խեղճ պատի թերթ. նրա բախտը կախված է նրանից, թե կհաջողվի՞ արդյոք խմբագրին՝ համոզել սրան-նրան, վոր մի վորեն է թղթակցություն դրի հերթական համարի համար:

Հաճախ խմբագիրը կուսկաղմակերպչից առաջարկություն է ստանում՝ շտապ կարգով լույս ընծայել պատի թերթը: Յե՛վ ահա, խմբագրին սկսում է վաղ-վրդել ցեխում, բռնում է առաջին իսկ հանդիպած բանավորի ոճիքից ու սկսում խնդրել.

— Դե, ի՞նչ կլինի, մի վորեն բան դրիր մեր թերթի համար: Դե, խնդրում եմ, դրիր: Ինչ գրե՞ս: Ինչ ուղում ես գրիր:

Հաճախ նույնիսկ պատասխանի չսպասելով՝ խմբագիրը վաղում է մի ուրիշի ոճիքը բռնելու: «Մի տասը հոգու ասեմ, դոնե մեկը մի վորեն բան կգրի»՝ մտածում է խմբագիրը:

Դժվար է հասկանալ, թե նման դեպքում ինչպի-
սի թերթ կստացվի:

Ի հարկե, աշխատանքի այս ձևը շատ պատի թեր-
թերի համար վաղուց արդեն մոռացված է: Սակայն
դեռ կան տեղեր, վորտեղ շարունակվում է խմբագրի
այս անողնականությունը:

Սրա պատճառն այն է, վոր այդ խմբագիրները չեն
հասկանում մի հասարակ բան— բանթղթակիցներ շատ
կան: Յեթե խմբագիրը կաղմակերպելու չնորհը ու-
նենա, յուրաքանչյուր առաջավոր բանվոր բանթղթա-
կից կդառնա:

Կան խմբագիրներ, վորոնք այս տողերը կարդա-
լով կմտածեն—դե յես ել եմ ուղում շատ բանթղթա-
կիցներ ունենալ, բայց վո՞րտեղից ճարեմ, ի՞նչպես
թղթակից դարձնեմ բանվորներին, ընտրությո՞ւն կա-
տարեմ, թե՞ ինչպես:

Վո՞չ, բանթղթակից ընտրել հարկավոր է: Դեռ-
յե՛վս 1924 թվին «Ռարոչի ժուռնալիստ» թերթի աշ-
խատակցի հետ ունեցած զրույցում ընկեր Ստալինն
ասաց.

«Բանթղթակիցներին բանվորների ընդհանուր ժո-
ղովում պիտի ընտրել, թե՞ խմբագրությունը պիտի
հավաքագրի: Իմ կարծիքով յերկրորդ միջոցը (խմբա-
գրությունների կողմից հավաքագրելը) ավելի նպա-
տակահարմար է»:

Յուրաքանչյուր խմբագիր պետք է իմանա, թե
բանվորական մամուլի գոյության առաջին տարիներ-
ին լենինն ինչպիսի մանրակրկիտ, բայց չնորհալալ

աշխատանք եր կատարում թղթակիցներ հավաքագրելու ուղղությամբ: Ն. Կ. Կրուպսկայան իր «Լենինը վորպես կուսակցական մամուլի խմբագիր ու կադմակերպիչ» գրքում գրում է.

«Թե Վլադիմիր Իլյիչը խմբագրի աշխատանքի վոր կողմին եր նշանակութուն տալիս, այդ յեղելում է 1913 թվին ընկ. Կասպարովին նրա գրած նամակից: Կասպարովը «Պրոսվեչենիյե»-յի համար մի հոդված եր գրել աղղային հարցի մասին:

«Թանկագին ընկեր, — գրում եր նրան Իլյիչը, — ստացա աւ կարդացի ձեր հոդվածը: Իմ կարծիքով լավ թեմա յե վերցրած և ճիշտ մշակված, սակայն գրական տեսակետից լավ չի մշակված: Նրա մեջ կա չափից ավելի — այսպես ասած — «աղի տացիա», վոր չի համապատասխանում տեսական հարցին: Իմ կարծիքով կամ դուք ինքներդ պետք է վերամշակեք, կամ մենք կրկործենք»:

Յեւ այսպես, թեմայի ընտրությունը, նրա մշակությունը, գրական մշակումը — ահա այն յեղեք մոմենտները, վորոնց վրա Իլյիչն ուղադրություն եր դարձնում»:

Մի ուրիշ տեղ ընկ. Կրուպսկայան գրում է.

«Ասենք թե անհրաժեշտ եր լինում վորեւէ նոր թեմա լուսարանել: Վոչ վոր գրելու ցանկություն չի հայտնում: Այն ժամանակ Իլյիչը գրույց եր սկսում այն մարդու հետ, ով ավելի հարմար եր այդ թեմայի մասին գրելու և սկսում եր նրա՝

նախադատրաստել: Վոչ թե միանգամից առաջարկում եր գրել այդ թեմայի մասին, այլ սկսում եր նրա հետ խոսել թեմայի մեջ շոշափվող հարցերի մասին, հետաքրքրություն առաջացնել դեպի այդ հարցերը, վորոշ ուղղությամբ տրամադրել նրան, լսել, թե ինչ կասի նա: Յերբեմն գործը դրանից դենը չեր գնում: Իլյիչը վերցնում եր վորեւէ մի ուրիշին ու սկսում եր խոսել նրա հետ և յերբ տեսնում եր, վոր «լուրճնում ե», սկսում եր ավելի մանրամասն քննարկել հարցը, պատասխաններից, ռեպլիկաներից տեսնում եր, թե այդ մարդն ինչպես կմեկնաբանի թեման, մանրամասն հայտնում եր նրան իր կարծիքը, սրարդարանում իր տեսակետը: Իսկ հետո առաջարկում եր. «Գրեցեք այդ թեմայի մասին, լավ հոդված դուրս կգա»: Յեւ մարդը Իլյիչի մոտեցումով գրաված գործի յեր անցնում ու հաճախ ուղղակի շարադրում նրա կարծիքը»:



Խիստ դժվար է սկիզբը: Մանավանդ այն խմբագիրներին համար, վորոնք չեն ճանաչում, կամ վատ են ճանաչում իրենց ցեխում աշխատող մարդկանց: Բանն այն է, վոր թղթակիցների իսկական հավաքագրումն սկսվում է այն ժամանակ, յերբ խմբագիրը վորեւէ առիթով ծանոթություն է հաստատում նրանց հետ:

Որինակ, մեր գործարաններից մեկում կար մի խումբագիր, վորը վոչմի կերպ չեր կարողանում իրեն շրջա-

պատել բանթղթակիցներով: Ձեյին ողնում վո'չ ան-
հատական հորդորները, վո'չ խնդրանքները, վո'չ
թերթում տեղավորած հայտարարությունները:

Բայց յերբ խմբագիրը սկսեց դործնական կառ
հաստատել բանվորներին հետ, նա դուրս յեկավ այդ
դրությունից: Ինչպե՞ս արեց նա այդ:

Մեր խմբագիրը մտածեց, վոր բանվորների ա-
մենակտիվ մասը լինում է արտադրական խորհրդ-
դակցություններում: Յեւ ահա մի արտադրական
խորհրդակցության ժամանակ նա սկսեց մանրամասն
գրի առնել բանվորների յեւույթները:

Նա ինքն եւ չեր սպասում, վոր բանվորների ճա-
ռերում այնքան հետաքրքիր ու արժեքավոր առաջար-
կություններ ու թեմաներ կլինեն պատի թերթի հա-
մար: Հարուստ ու հետաքրքիր նյութ... Այ, յեթե
բանթղթակիցներն այդպես եւ դրեյին, հիանալի թերթ
կստացվեր:

Սակայն այն ժամանակ բանթղթակիցները վոչ
միայն այդպես, այլև ընդհանրապես չեյին դրում:
Խմբագիրը բավարարվեց նրանով, վոր պատի թերթի
հերթական համարում տեղավորեց արտադրական
խորհրդակցության մանրամասն հաշվետվությունը՝
լցնելով այն գլխավորապես ստախանովականների յե-
ւույթներով:

Այս թերթի առաջին համարն եր, վոր ցեխում
մեծ հաջողություն ունեցավ: Բառացիորեն բոլորը
կարդացին թերթը: Այնուհետև խմբագիրն սկսեց
դրույցներ ունենալ առանձին ընկերների հետ, լսել

նրանց կարծիքները, տեղեկանալ, թե ինչ հարցեր են
հետաքրքրում ցեխին: Այս ամենն ողնեցին խմբագրին
և կարճ ժամանակում նրա շուրջը համախմբվեցին մոտ
20 բանթղթակիցներ:

Յեխային թերթի խմբագիրը սովորաբար բանվոր
ե լինում և շարունակ չիում է ունենում ցեխի բան-
վորների հետ: Յենթագրե՞ք խմբագիրն աշխատանքի
յեկալ, իսկ նրա ընկերը դժուհում է, թե մեքենայի
յուղի վորակը լավը չէ: Ինչո՞ւ նրան չխնդրել, վոր
դրա մասին մի թղթակցություն գրի պատի թերթին:
Յեւ յերբ նա գրի և թղթակցությունը տեղավորվի,
իսկ յուղի վորակը լավացվի, բանթղթակիցը կհամոզ-
վի, թե ինչպիսի ուժ ունի պատի թերթը:

Խմբագիրը լավ պիտի ճանաչի բանթղթակիցնե-
րին, ուսումնասիրի նրանց ընդունակություններն ու
հակումները, այն ժամանակ նա կկարողանա յուրաքան
չյուրին այնպիսի հանձնարարություն անել, վորը
սովալ ընկերն ամենից լավ կարող է կատարել:

Յերբեմն խմբագիրը պլան կազմելիս մտածում է,
վոր հարկավոր է, յենթագրե՞ք, լուսաբանել նորմա-
վորման հարցը, կամ քննադատել ստախանովական-
ների ուսուցման գործի դրվածքը, բայց չի խմանում,
թե այդ թեմաներն ում հանձնարարի: Այստեղ խմբա-
գրին ոգնության է գալիս նրա որագիրը, հիշատա-
կարանը: Նա հիշեցնում է, վոր այսինչ ընկերն ար-
տադրական խորհրդակցությունում խեղացի յեր խո-
սում նորմավորման տեխնիկայի մասին, ուրեմն՝
այդ թեմայի մասին գրելը նրան պիտի հանձնարարել:

Բանթղթակիցներ սլիտի վորոնել սլատի Թերթի ընթերցողներին մեջ: Պատի Թերթի խմբադիրը շատ լավ կանի, յեթե Թերթի հերթական համարը կախելուց հետո մնա նրա մոտ և ուշադրութեամբ լսի, թե մոտեցող բանվորներն ինչ են ասում: Այստեղ նա կարող և լսել, թե տեղավորված Թղթակցութունների մասին ինչ կարծիք են հայտնում, ինչ նոր վիստեր են բերում, ինչ մտքեր են արտահայտում: Այստեղ խմբադիրը կիմանա, թե բանվորներից վորը ինչ նյութեր ունի և ինչի մասին կարող և գրել: Որինակ՝ մեկը կարող է վորեւ ցտախանովականի նվաճումների մասին տեղավորված Թղթակցութունը և հենց այդտեղ պատմում և նաև իր նվաճումները: Ինչո՞ւ չմոտենալ նրան և խնդրել, վոր այդ մասին գրի և տա Թերթի մյուս համարին: Կամ, յենթադրենք Թերթում զննադատվել և ցեխի վարպետը և ընթերցողներն այդ կարգալով խոսում են ուրիշ Թերթյունների մասին ևս. պարզ և, վոր դրանք պատրաստի հեղինակներ են վորոչակի նյութերով:

Ընդունենք, թե վորեւ բանվոր իր անհատականին վերաբերող վորեւ արդարացի բողոքով դիմում և խմբադրութեանը: Յեթե խմբադիրն անուշադրութեան չմատնի նրան, ընթացք տա նրա արդարացի բողոքին և դրական լուծման հասնի, պարզ և, վոր այդ մարդը կդառնա Թերթի՝ բարեկամը, կհավատա նրա ուժին և կդառնա նրա Թղթակիցը:

Նույնիսկ ամենամանր խնդիրներն անուշադրութեան մատնել չի կարելի: Յեթե, որինակ, մեկը մի

Թղթակցութուն և գրել ասլակին վիշելու մասին, թեկուզ մի քանի տողով սլտի տեղավորել այդ Թղթակցութունը և ոգնել նրան, վոր աստիճանաբար անցնի ավելի լուրջ խնդիրներին:



Իհարկե, միմիայն բանթղթակիցներ հավաքադրելով բավականանալ չի կարելի: Բանթղթակիցների մեջ ամենորոյա աշխատանք պետք և կատարել: Բանթղթակիցների ակտիվի հետ պետք և զննարկել սլատի Թերթի յուրաքանչյուր համարի պլանը: Պակաս ոգուտ չի տա նաև բանթղթակիցների Ժողովում լույս տեսած համարի զննարկումը: Հենց իրենք՝ բանթղթակիցները պետք և զննադատեն Թերթի լույս տեսած համարը: Նրանք կկարգան տեղավորված Թղթակցութունները և կզննադատեն բաղձակողմանիորեն—վորքան կարեւոր խնդիր և շոշվախված տվյալ Թղթակցութեան մեջ, վորքան Ժամանակին և լույս տեսել, լա՞վ և գրված արդյոք այդ Թղթակցութունը:

Բանթղթակիցներին մեծ ոգուտ կտա նաև այն, վոր նրանք իմանան, թե մամուլի տեսություններում ինչ են գրում իրենց Թերթի և մյուս Թերթերի մասին: Մեծ Թերթերում սովադրված մամուլի տեսությունների կոլեկտիվ զննարկումը բանթղթակիցների կոլեկտիվ աշխատանքի հիանալի մեթոդ և:

Բանթղթակիցների մեջ տարվելիք աշխատանքի ամենակարեւոր խնդիրներից մեկն էլ նրանց վորակի բարձրացումն և: Քիչ չեն այն բանթղթակիցները,

վորոնք լավ գրել չեն կարողանում: Խմբագիրը մեծ ոգուտ տված կրինի, յեթե թղթակցությունն ուղղի հենց հեղինակի ներկայութեամբ, բացառելով նրան թերությունները:

Յերբեմն բանթղթակիցը հաջողութեամբ չի կատարում խմբագրի տված հանձնարարութիւնը: Ի՞նչն է դրա պատճառը: Պատճառն այն է, վոր ինքը՝ խմբագիրն էլ ինչպես պետքն է, չի մշակել իր տված խնդիրը: Նա բանթղթակցին խորհուրդներ չի տվել, թե վոր տեղ և ինչպես պիտի ժողովել անհրաժեշտ նյութերը, ինչ գերականութիւն պիտի կարգա տվյալ խնդրի շուրջը, ում հետ պիտի զրույց ունենա և այլն:

Շատ խմբագիրներ չեն հետաքրքրվում, թե բանթղթակիցներն ինչ գրքեր են կարդում, լինո՞ւմ են գրադարանում, թե վոչ: Հարկավոր է հետաքրքրվել այդ խնդրով և աջակցել բանթղթակցի ինքնադադադմանը:

Պատահում է, վոր բանթղթակիցները փաստերը սխալ են լուսարանում, կամ գրում են առանց անձամբ ստուգելու, ուրիշի ասածների հիման վրա: Որինակ, պատահել է այսպիսի դեպք: Բանլորը վրդովված յիկել, պատմել է բանթղթակցին, թե ցեխի վարպետն առանց վորեւէ հիմքի իրեն չի թույլատրել աշխատանքի անցնել: Թղթակիցը գրել է դրա մասին ու հանձնել պատի թերթի խմբագրին: Բարեբախտաբար խմբագիրն այդ թղթակցութիւնը տեղափոխելուց առաջ հետաքրքրվել է այդ խնդրով և ինչ է պարզվել, այդ բանլորի դադդյահը փչացած է յեղել և ցեխի վար-

պետը նրա կյանքը վտանգի չյենթարկելու համար արգելել է նրան աշխատել, մինչև դադդյահը կարգի բերելը: Ահա այսպիսի սխալ թղթակցութիւնների կոկեկով քննարկումը մեծ ոգուտ կտա բանթղթակիցներին, այդ փաստի հիման վրա թղթակիցները կհասկանան, վոր յուրաքանչյուր նյութի մասին գրելիս պետք է իրենք անձամբ ստուգեն փաստերը և ճշտորեն լուսարանեն:

Թղթակցութիւններն ուղղելիս խմբագիրը բաղմամբով փաստերի յե հանդիպում, վորոնք կրթական-գաստիարակչական մեծ նշանակութիւն ունեն: Այդ փաստերը պետք է գրի առնել և բանթղթակիցների ժողովում քննութիւն առնել, վորպեսզի ընկերներն իրենց հետագա թղթակցութիւնները գրելիս խուսափեն նման սխալների կրկնութիւնից:



Կան խմբագիրներ, վորոնք կարծում են, թե իրենց ու բանթղթակիցների հարաբերութիւնները սահմանափակվում են հետեյալ պարզ ֆորմուլայով:— Ես խմբագիր եմ, դու թղթակից, դու գրում ես, յես տեղավորում եմ թերթում, ահա բոլորը: Ի՛յս միանգամայն սխալ ըմբռնողութիւն է: Լավ խմբագիրն ամէլի սերտ կապ պիտի պահի բանթղթակցի հետ: Յեթե թղթակիցը հիվանդ է, խմբագիրը նույնիսկ պիտի այցելի նրան և անհրաժեշտութիւն դեպքում հետեւի, վոր նրան ոգնութիւն ցույց տրվի: Յեթե թղթակիցը հանգստի տուն, կամ սանատորիա յե

գնացել, խմբադիրը նամակադրություն պիտի ունենայ նրա հետ և տեղյակ պահի ցեխում տեղի ունեցող նորություններին, պատի թերթի արծաթած խնդիրներին ու ձեռք բերած նվաճումներին: Լավ խմբադիրը պետք է հետաքրքրվի իր բանթղթակիցների ուսման խնդրով, խորհուրդներ առ նրանց, մասնակցի նրանց առաջնությունը: Յուրաքանչյուր խմբադիր իրեն խնդելի պիտի դնի տարեկան գեթ մի բանթղթակցի ուղարկել ժողովրդաստական վորեւ դպրոցում սովորելու:

Թղթակցին հալածելու յերևույթը վերջին ժամանակներս բացառիկ բան է դարձել: Սակայն սխալ կլինի կարծել, թե իսպառ վերացել է այդ: Խմբադիրը պետք է ուշադիր լինի դեպի բանթղթակցի յուրաքանչյուր հայտարարությունն այդ ուղղությամբ և յեթե պարզվեց, վոր իրոք, հալածանք կա թղթակցի դեմ, գործնական քայլերի գիմի թղթակցին պաշտպանելու և ինքնաքննադատությունը ճշգողին պատժելու համար:



Բանթղթակիցների մեջ ամենի հաջող աշխատանք տանելու համար լավ կլինի ցեխում կազմակերպել մի փոքրիկ «բանթղթակցի անկյուն»: Այստեղ կարելի չե՞ դնել պատի թերթը, գործարանի բաղամտիբաժ թերթը և կենտրոնական թերթերը: Կարելի չե՞ կախել մի տախտակ, վորի վրա կպցնել կենտրոնական թերթերից կտրած նյութերը՝ տվյալ գործարանի մասին: Այստեղ կարելի չե՞ կախել բանթղթակիցներին հանձ-

նարարվող գրականության ցուցակը: Բանթղթակցի համար պիտի հարմարություններ ստեղծվի, վոր նա այստեղ թղթակցություններ գրի, թերթեր կարդա, շրույց ունենա խմբադրի հետ զանազան թեմաների մասին:

Խմբադրի կողմից բանթղթակիցների մեջ կատարվող դաստիարակչական աշխատանքի հաջողությունը մեծ չափով կախված է նրանից, թե կուսակազմակերպությունն ինչ չափով է ուշադրություն դարձնում այդ խնդրի վրա: Շատ քաղաքներում ու գործարաններում կուսակցական կազմակերպությունների վորոշամբ սահմանված է «բանթղթակցի որ»: Այդ որը բանթղթակիցները հալածվում են իրենց գործերը քննելու:

Կուսակցական կազմակերպությունը պիտի հոգա, վոր բանթղթակիցն ընդգրկվի կուս-քաղաքական լուսավորության ցանցում, ուսումնասիրի կուսակցության պատմությունը, լավ հասկանա քաղաքական անցուղարձը, անընդհատ բարձրացնի իր քաղաքական և կուլտուրական պատրաստության մակարդակը:

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂ- ՂՈՒՄՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ

ՈՒՂՂՈՒՄԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԳՈՐԾ Ե

Պատի թերթի խմբագրությունը մի բանթղթակ-
ցից ստացել է մի թղթակցություն: Հաղորդված փաս-
տերը հետաքրքիր են, ճշտությունը կասկածի չենթա-
կա չեն: Շատ ընկերներ կարծում են, թե այդպիսի
դեպքերում թղթակցությունը կարելի չէ տպագրել
այնպես, ինչպես վոր նա կա, առանց վորևէ փոփո-
խություն չենթարկելու, յեթե նույնիսկ զբված է
խառնիխուռն և անորոշ: Վորոշ խմբագիրներ ել թըղ-
թակցությունն ուղղելու գործը վստահում են յերկ-
րորդական աշխատակիցների, նույնիսկ քիչ ստուգ-
ված մարդկանց:

— Ուղղելը տեխնիկական գործ է, — ասում են
ներանք, — մի քիչ «կիսուղի» և պրծավ:

Սակայն մեծ սխալ են գործում այն ընկերները,
ովքեր լուրջ նշանակություն չեն տալիս թերթի լեզ-
վին, անուշաղբի են վերաբերվում թղթակցությու-
նների ուղղմանը, իսկ հաճախ ել նույնիսկ թղթակցու-
թյան խմատը հասկանալը: Այստեղ խմբագիրը ու-

շաղթություն միայն նայի, թե ինչպես է շարադրած
տվյալ թղթակցությունը, ինչպես են գործածված նրա
մեջ առանձին բառերը և բառերի ինչպիսի ընտրու-
թյուն է կատարված:

Խառնիճազանչ շարադրումը միազնում է թըղ-
թակցության իմաստը, դժվարացնում է նրա միտքը
հասկանալը: Շատ անհրաժեշտ է իմանալ և հիշել,
թե Լենինն ինչպիսի նշանակություն եր տալիս հոդ-
վածի լեզվի մառչելիությանը՝ ամենալայն մասսա-
ներին: «Նլի արհմիությունների մասին» հոդվածում
քննադատելով ընկ. Բուխարինի գործածած «արտադ-
րական դեմոկրատիա» արտահայտությունը՝ Լենինը
գրել է.

«Բուխարինն իր դիմումը մասսաներին սկսում
է այնպիսի խելամիտ տերմինով, վորը հարկավոր
է առանձնապես բացատրել. իմ կարծիքով դեմո-
կրատիզմի տեսակետից այդ վոչ դեմոկրատական
է: Մասսաների համար պետք է գրել առանց այն-
պիսի նոր տերմինների, վորոնք հատուկ բացատ-
րություն են պահանջում: «Արտադրական» տե-
սակետից ել այդ վնասակար է, վորովհետև հար-
կադրում է ի զուր ժամանակ կորցնել անպետք
տերմինի բացատրության համար» (Լենին, հատ.
XXVI, էջ 124):

Կրկնում ենք, բավական չէ, վոր թղթակցությունը
հետաքրքիր փաստեր է տալիս և վոր խմբագիրը լրիվ
հասկանում է այն: Թերթում թղթակցություն տեղա-
վորելիս խմբագիրը միշտ ել պետք է նկատի ունենա

ընթերցողների շահերը, յուրաքանչյուր թղթակցութեան պիտի մոտենա այն տեսանկյունով, թե նա լիովին կհասնի՞ նրան, ում վոր ուղղված է: Այստեղ մենք նորից մի հիանալի որինակ բերենք մեր մեծ ուսուցիչ Լենինին:

Կլարա Յետկինը Լենինի մասին գրած իր հիշողութիւններէի մեջ պատմում է, վոր մի անգամ, յերբ Կոմինտերնէրի 3-րդ Կոնգրեսում Լենինն իր ճառն ասել, վերջացրել էր, ինքը (Կլարա Յետկինը) մոտեցել է նրան ու հարցրել, թե ինչու յե նա այդքան պարզ ու հասարակ և միաժամանակ զեղեցիկ ու համոզիչ խոսում: «Գուցե այդ սլավոնական կուլտուրայի յուրահատուկ դիժն է» — հարցրել է Յետկինը: Յեւ վլադիմիր Իլյիչը նրան պատասխանել է.

«Յես այդ չգիտեմ: Յես միայն այն գիտեմ, վոր յերբ յես յելույթ ունեցա «վորպես հոետոր», շարունակ մտածում եյի բանվորներէի ու գյուղացիներէի՝ վորպես ինձ լսողներէի մասին: Յես ցանկանում եյի, վոր նրանք ինձ հասկանան: Կոմունիստը վորտեղ ել խոսելու լինի, պետք է մտածի մասսաներէի համար, պետք է խոսի նրանց համար»:

Նշանակում է՝ պարզ է, վոր թղթակցութիւնն ուղղելը, նրա կանոնավոր շարադրումը «տեխնիկա» չէ, այլ խոշոր, քաղաքականորեն պատասխանատու դործ է:

ՈՒՂԼԵԼ, ԲԱՅՑ ԶԱՆԱՎԱՂԵԼ

Հետախոր Սրեկեյան յերկրամասում վորոշիւովսկ քաղաքի մի դործարանի վերանորոգման ցեխի ստախանովական ընկ. Պեմչենկոն պատի թերթի խմբագրին և հանձնում մի թղթակցութիւն հետեյալ բովանդակութեամբ.

«Մեր կոմբինատում բնակարաններէի խիստ պակասութիւնն է դղացւում: Չնայած դրան, բնակարանային բաժնի ղեկավարները — ընկ. ընկ. Ալամովն ու Շպորտունը վոչ մի միջոցի չեն դիմում կոմբինատի տներէց վտարելու այն մարդկանց, ովքեր կոմբինատի սխտեմում չեն աշխատում:

Որինակ՝ բանվոր Պոտապիկինը, վոր դործաւրման պտուճառով մարտ ամսին հեռացվել է և հիմա աշխատում է շրջխորհրդում, դեռևս ապրում է կոմբինատի տանը:

Ալամովն ու Շպորտունն ինչո՞ւ յեն այդպիսի սիրալիքութիւն ցույց տալիս դեպի չվող Պոտապիկինը»:

Այս թղթակցութիւնը գրված է պարզ և հասկանալի: Կարելի յեր թերթում տեղադրել թերևս աննշան ուղղումներ անելուց հետո: Բայց պատի թերթի խմբագիր Որդանովն ուրիշ կերպ է մտածում.

— Չափազանց հասարակ լեզվով է գրված: Հարկավոր է մի քիչ աշխուժացնել, մի քիչ փելիսոփայութիւն մտցնել մեջը:

Յեւլ ահա՝ մտցնում է «փիլիսոփայությունը».

«Մեր մոլորակը, ինչպես և մեր կոմբինատը գերբնակեցված է: Բայց մենք խիտ զարմացած ենք— ինչո՞ւ դուք բնակարան չեք մոլորոնում կոմբինատի տներում՝ ձեր բանվորների համար: Մընում է միայն զարմանալ այդ, թույլ տվեք ստեղծ, մարսեցիներին վրա և Մարսի վրա բնակարան մոլորոնելու հրաժարվել: Իսկ Մարսեցիներն իրենց հերթին...» և այլն:

Շրջանային «Կոմունար» թերթը գրում է, վոր բանթղթակիցներն այս դեպքից վրդուվելով զարդարեցին թղթակցություն գրել պատի թերթին: Ի հարկե, բանթղթակիցները ճիշտ չեն վարվել. նրանք պետք է խնդիր դնեյին փոխելու այդ խմբագրին, կամ պահանջեյին, վոր նա վերջ տա այդպիսի «ուղղումներին», յեթե կարելի չե հուսար, վոր Որգանովը կուղղվի և կհրաժարվի այդ ճոռամասիրությունից:

Թղթակցությունն ուղղել—չի նշանակում ծանրաբեռնել այն զանազան ավելորդաբանություններով, աղավաղել հեղինակի միտքը, կամ ավելացնել ընդհանուր ֆրազներ:

Որինակ՝ Լենինգրադի մարզի Գոլոդաևսկի վոյսոսմթերման կայանի «Հարվածային» պատի թերթի խմբագիր ընկ. Ա.Ֆոնիչեն այն կարծիքին է, թե յուրաքանչյուր թղթակից պետք է ունենա իր նախաբանը: Յեթե թղթակիցը նրան գրում է զարնանացանի նախապատրաստության մասին, խմբագիրն անպայման ավելացնում է.

«Ռուր գործարաններում ու անտառներում, խորհրդային Միության բոլոր կոլտնտեսություններում լայնորեն ծավալվել է ստախանովյան շարժումը»:

Յեթե մի թղթակցություն է ստացվել լողերի մասին, խմբագիրն անպայման ավելացնում է այսպիսի մի նախաբան.

«Մեր յերկիրն ունի հարյուրավոր հերոսներ թե գործարաններում, թե սոցիալիստական դաշտերում: Սակայն մեղ մոտ զեռ կան լողեր, ինչպիսիք են Մակարովն ու Պրոխորովը»:

Բանթղթակիցն իր թղթակցության մեջ մերկացնում է մի գողի: Բայց խմբագիրը դրան ել է նախաբան կպցնում.

«Մենք կառուցում ենք սոցիալիզմ, վորտեղ մարդիկ պետք է զիտակից լինեն: Սակայն, չնայած դրան, մեղ մոտ կան անզիտակիցներ, վորոնք հալիչտակում են սոցիալիստական սեփականությունը»:

Յեւլ ստացվում է հիմարություն. լողերն թերթը նախատում է, վոր նա ստախանովյան չե, իսկ գոլությունը պատճառաբանում է անզիտակցությամբ..

Ի՞նչ կարելի չե ավելացնել թղթակցությունն ուղղելիս:

Կարելի չե նկարագրված փաստերից ճիշտ յեղրակացություններ անել: Կարելի չե գործնական առաջարկություններ անել, թղթակցությունն ախուժացներու համար համապատասխան առաժներ, ստացվածք

ներ մտցնել նրա մեջ: Սրանց դեմ թղթակիցները չեն բողոքել:

Թղթակցությունը պետք է ուղղել անհրաժեշտության պահանջածի չափով, պահպանելով հեղինակի վճռը, հաշվի առնելով նրա լեզվի յուրահատկությունը:

Ընկ. Կրուպսկայան այս խնդրի մասին գրում է.

«Ինչը շատ հոգատար վերաբերմունք ունեւ դեպի այդ գործը (թղթակցությունների ուղղումը): Նա շատ էր հոգ տանում, վոր պահպանվեն թղթակցությունների վրդին, վճռը, յուրահատկությունը, վոր այդ թղթակցությունները ծաղկաթափ չլինեն, չափից ամլելի չլինտելիդենտացվեն, այլ պահպանեն իրենց դեմքը»:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՔՈՒՐ, ՊԱՐԶ ԼԵԶՎԻ ՀԱՄԱՐ

Այս, ի հարկէ չի նշանակում, թե կարելի յե ընկնել մյուս ծայրահեղության մեջ և ամենևին չուղղել թղթակցությունները: Թղթակցությունը պետք է ուղղել, սակայն այդ պիտի անել խնամքով, հարգանք ունենալով դեպի հեղինակն ու ընթերցողները, վորոնց ձանձրացնում են ստանդարտ թղթակցությունները: Թղթակցությունն ուղղել նշանակում է վոչ թե աղավաղել այն, այլ նրա միջից դուրս նետել կոչտ ու կոպիտ, հայհոյալից արտահայտությունները, ուղղել կենդանի լեզվի բոլոր աղավաղումները:

Պատի թերթի լեզուն պետք է լինի պարզ, մա-

քուր, իր ընթերցողներին հասկանալի, իսկական ժողովրդական լեզու:

Ինչպես ընկ. Բոնչ-Բրուելիչն և գրում, յերբ Լենինը տեսնում էր, վոր մի վորեն հոգված սահուն, պարզ լեզվով չէր գրված, նա հարցնում էր նրա հեղինակին.

«Մի՞թե դուք չեք կարող ձեր մտքերն ուսմերեն լեզվով այնպես արտահայտել, վոր բոլորին հասկանալի լինի: Ռուսաց լեզուն շատ հարուստ է: Յեթե դուք այդ չեք անում, ապա մեղավորը դուք եք և վոչ այն լեզուն, վորով դուք գրում եք»:

Ինքը՝ Լենինը հիանալի խմբագիր էր և ինքն էլ հիանալի գրում էր: Ինչպես ընկեր Ստալինն է գրում, «միայն Լենինն էր, վոր ամենախրթին հարցերի մասին կարողանում էր գրել այնքան պարզ ու հրատակ, հակիրճ ու համարձակ, վոր նրա յուրաքանչյուր նախադասությունը կարծես վոչ թե խոսում էր, այլ կրակում էր» (Ի. Ստալին—«Լենինի մասին»):

ԶԶԱՐԱՇԱՅԵԼ ՈՏԱՐ ԲԱՌԵՐԸ

Վլադիմիր Իլյինը դեմ էր մամուլում անտեղի կերպով ոտար բառեր գործածելուն: Դեռ հեղափոխությունից առաջ նա գրում էր.

«... ս.—դ. պետք է կարողանան խոսել պարզ ու հասարակ, մաստաներին մատչելի լեզվով, վճռականորեն դեն չպրտելով դժվարիմաց տեր-

մինների, ոտար բառերի ծանր հրետանին, վոր անդիր արված է, պատրաստի, բայց դեռևս մասսային անհասկանալի...»:

Նույն միտքը նա արտահայտեց նաև Հովտեմբերյան Հեղափոխությունից հետո, «Ռուսաց լեզուն գտելու մասին» հոդվածում, ուր գրում է.

«Մենք փչացնում ենք ռուսաց լեզուն: Ոտար բառերը դործ ենք արծում առանց անհրաժեշտություն».

. ժամանակը չե՞ արդյոք կույժ հայտարարելու առանց անհրաժեշտություն ոտար բառեր դործածելու դեմ»:

Հասկանալի չե, վոր այստեղ խոսքը չի վերաբերում վաղուց արդեն դործածություն մեջ մտած հանրահայտի բառերին, ինչպիսիք են՝ ավտոմոբիլ, արամվայ, վադոն, մետրո և այլն: Խոսքը վերաբերում է այն բառերին, վորոնք իրոք անհասկանալի չեն մասսաներին և հեշտություն կարելի չե փոխարինել նույն նշանակություն ունեցող մայրենի լեզվի բառերով:

ԱՆՉԻՄՆ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պարագիրներ կան, վորոնք բառերի այնպիսի կրճատումներ և միացումներ են անում, վոր ընթերցողները պիտի գլուխ կոտրեն հանելուկի պես նրանց իմաստը հասկանալու համար:

Լենինն այդպիսի կրճատումների մասին խոսեց ու ծաղրի յենթարկեց նույնիսկ կուսակցություն 11-րդ համագումարում: Ի հարկե, նրա խոսքը չեք վերաբերում արդեն իսկ ընդհանրացած ու բոլորին հասկանալի կրճատումներին, ինչպիսիք են՝ կենսագործ, կոմ, ժողկոմխորհ, չրջկոմ, կենտկոմ, բանկոմ և այլն: Նրա խոսքը վերաբերում էր այն կրճատումներին, վորոնք հասկանալի չեն միայն գրողին կամ շատ փոքրաթիվ մարդկանց, բայց վոչ յերբեք լայն մասսաներին: Ի՞նչ իմանա, որինալ, ընթերցողը, վոր «ԲՄԲ» նշանակում է բանվորական մատակարարման բաժին, կամ՝ «ՊՏՑԸ» նշանակում է պրոլետարական տուրիզմի և եքսկուրսիայի ընկերություն, և կամ ինչո՞ւ պիտի ընթերցողը դեռ ու դեն ընկնի, սրան նրան դիմի, մինչև հասկանա, վոր «ՀՈՒՔՊ» նշանակում է հակոդային և քիմիական պաշտպանություն:

Յեվ ինչպես ընկ. Բոնչ-Բրուսևիչն է գրում, հաճախ Լենինն այս կամ այն թերթի խմբագրին ասում էր.

«Դուք ստիպված եք ձեր թերթի յուրաքանչյուր համարի հետ մի բառարան տալ ընթերցողին: Թերթը կարդում է մասսան և վոչ թե առանձին անհատներ, վորոնք գիտեն բյուրոկրատիայի լատեղծած նոր լեզուն և չի կարելի թույլ տալ, վոր մասսան՝ հոդվածը կարդալով մի կողմը նետի այն, վորպես միանգամայն անհասկանալի մի բան»:

Հաճախ մեր թերթերի լեզուն փչանում, ալլան-
դալլում է գրասենյակային ամփոփումներից փոխ
ստեղծած, յերբեմն նույնիսկ կիսադրաղետ մարդկանց
ստեղծած շինծու, անճոռնի բառերով, չոր ու ցամաք
նույնիսկ անճիշտ արտահայտություններով:

Որինակի համար, գրում են.

«Ձուլարանի ցեխը պետք է վերակառուցի իր
աշխատանքը վորակային արտադրանքի դժով,
ստախանովյան չարժման ծավալման դժով, դոյու-
թյուն ունեցող թերությունների վերացման դժով:

Եւ չենք խոսում այն մասին, վոր այս ամբողջ
նախադասությունը կոնկրետ չի և եյապես բան չի
ասում ընթերցողին: Ուշադրություն դարձնենք միայն
նախադասությունը կազմելու ձևի վրա: Մի՞թե ավելի
պարզ ու հասկանալի չեր լինի, յեթե դրվեր այսպես.

«Ձուլարանի ցեխը պետք է վերակառուցի իր
աշխատանքը, վորպեսզի վորակով արտադրանք
առա, ծավալի ստախանովյան չարժումը, վերացնի
յեղած թերությունները»:

Բաղմաչարչար բառեր են դարձել և մեր թեր-
թերում տեղի անտեղի դործ են ածվում նաև «ընդ-
գրկել», «100 տոկոսով», «համապատասխան», «այս-
քանի սահմաններում» և այլն:

Միթե՞ խմբագիրը, վոր իր տուն դնա, կնոջը
կհարցնի՝ «ուղարկածս ձմերուկը 100 տոկոսով կե՞-
րաք», կամ նա կասի՞ այսպիսի բան — «այսոր ոռճի-

կըս 100 տոկոսով ստացա: Իհարկե, վո՛չ: Նա կասի-
«ուղարկածս ձմերուկն ամբողջապես կերա՞ք», կամ՝
«այսոր ոռճիկս լրիվ ստացա»:

Այլա ինչո՞ւ այդ նույն խմբագիրը թերթում իր
ընթերցողների հետ խոսելիս ասում է «ցորենի հուն-
ձը 100 տոկոսով ավարտված է»: Ձի՞ կարելի ստեղ՝
«լրիվ ավարտված է»:

„ԹՎԵՐ ԿԱՐԴԱԼԸ ԴԺՎԱՐ Ե“

Կան խմբագիրներ, վորոնք կարծում են, թե թըղ
թակցության մեջ վորքան շատ թվեր լինեն, այնքան
համոզվիչ կլինի: Մինչդեռ իրականում ստացվում է
միանգամայն հակառակը. ընթերցողը կամ ուղղակի
հրաժարվում է թվերով խճովված հոդվածը կարդալ
և կամ կարդում է առանց թվերի վրա ուշադրություն
դարձնելու. թվերը կարդալու փոխարեն մտքում կըրկ-
նում է «այսքան», «այսքան», «այսքան»: Յեւ հա-
կանայի յե, թե ինչու խորհուրդների համառոտական
8-րդ համադրումարում ղեկուցելիս Լենինն ասում եր.

«Ձեզ բաժանած այդ դրքույկում, վոր պարու-
նակում է Մատթոզկոմատի 3 տարվա հաշվետ-
վությունը, մի աղյուսակ կա, վորից յես կկար-
դամ միայն հանրադրամարային թվերը, և այն
եւ կըր թվերով, վորովհետեւ թվեր կարդալը և
մանավանդ լսելը դժվար է»: (Լենին, հատ. 26-րդ
եջ 39):

Նույնը և ավելի մեծ չտիրով կարելի չէ ասել նաև տոկոսների մասին: Փոխանակ դրելու «49,9%», կարելի չէ գրել «մոտ կեսը», փոխանակ դրելու «245 տոկոս», կարելի չէ գրել յերկու ու կես անգամ ավելի: Յեւ ղա ավելի պարզ ու տպավորիչ կլինի ընթերցողի համար:

Հասկանալի չէ, Վոր պետք է խուսափել նաև քարոշ աղյուսակներից: Չե՞ վոր յուրաքանչյուր աղյուսակի բովանդակությունը կարելի չէ տալ բացատրական թղթակցության ձևով և այդ ավելի դյուրըմբռնելի կլինի:

Իսկ յեթե խմբագրությունն անհրաժեշտ է դնում թվական ամփոփումներ տալ, պետք է տա միայն հիմնական, գլխավոր թվերը և այն ել անույն մասն մանրամասն բացատրություններով:

Յուրաքանչյուր միտք, յուրաքանչյուր իմաստ արտահայտելու համար ընդլի մեջ հաստակ բառեր կան:

Սակայն քիչ չի պատահում, յեթե թղթակիցը, կամ հենց թղթակցությունն ուղղողը բառերի չփոթե և ստեղծում և թղթակցության իմաստն անհասկանալի դարձնում: Թղթակցությունն ուղղելիս շարունակ պետք է մտածել— արդյոք հենց ա՞յն բառն է գործածված, Վորը հարկավոր է այստեղ: Տեղի՞ն է այս բառը, ճի՞շտ կհասկանան ընթերցողները մեզ:

Բայց, ահա քիչ չեն պատահում այսպիսի արտահայտություններ.

«Յերբ ամբողջ յերկրում հնչեց ստախանովյան

չարժման մեթոդը...» Թղթակիցն այստեղ ցանկացել է ասել. «Յերբ ամբողջ յերկրում ստախանովյան շարժումը բուռն թափով ծավալվեց...», իսկ խմբագրությունը նեղութուն չի քաշել ուղղելու անճիշտ արտահայտությունը և տպել է նույնությամբ:

Կամ թե դրում են.

«Քիչ ողնություն է հատկացված»

«Ղեկավար դեր է տանում»:

Մինչդեռ ողնությունը վոչ թե հատկացվում է, այլ ցույց է տրվում, դերը վոչ թե տարվում է, այլ խաղացվում, կամ կատարվում է:

Մի ուրիշ որինակ: Գրում են. «վարչության անփութության շնորհիվ կոտնտեսությունը մնաց առանց խոտի»: Բայց ի՞նչ շնորհ կա այստեղ, վոր դործ է անվում «շնորհիվ» բառը: Պարզապես պետք է գրել «վարչության անփութության պատճառով...» և այլն:

Իհրենք դրասենյակային խճողված ու մշուշապատ արտահայտությունների մի քանի որինակ ևս.

Գրված է

Ուզում է տեսի

1. Բրիգադր ցորենի հունձը կատարեց:
2. Ղեկավարները պարտավորություն վերցրին:
3. Կոմյերիտականներն անց կացրին դպրոցի բակի ծաղկազարդումը:

1. Բրիգադը ցորենը հնձեց:
2. Ղեկավարները պարտավորվեցին:
3. Կոմյերիտականները դպրոցի բակը ծաղկազարդեցին:

4. Առաջարկութեան մըտ-
ցըրին պատի թերթի
հրատարակման մասին:
5. Պահանջում ենք մի-
ջոցառումների ձեռքա-
ռում և ոգնութեան բրի-
րիզողին:

4. Առաջարկեցին պա-
տի թերթ հրատարա-
կել:
5. Պահանջում ենք մի-
ջոցներ ձեռք առնել
և ոգնել բրիզողին:

Մի՞թե ակներև չէ, վոր միևնույն արտահայ-
տութեանները յերկրորդ ձևով շատ ասիելի պարզ են
ու հասկանալի և ասիելի քիչ տեղ են բռնում, քան
առաջին ձևով:

ԱՎԵԼՈՐԴ ԲԱՌԵՐ

Վոմանք կարծում են, թե յուրաքանչյուր ավե-
լորդ բառ ու արտահայտութեան ողնում է հեղինա-
կի միտքն ասիելի լավ հասկանալու: Դա ճիշտ չէ:
Ավելորդ բառերը միայն ծանրացնում են նախադա-
տութեանը և դժվարացնում հասկանալը:

Ահա մի քանի որինակ.

1. «Միջգործարանային ոսդիտ կանչը, վոր տե-
ղի ունեցավ մայիսի 26-ին, հաստատեց...»:

2. «Պետք է նշել, վոր այն բրիզողներում, վոր-
տեղ բրիզողի անդամների մեջ աշխատանքի ճիշտ
բաշխում է կատարված...»:

3. «Ցեխի վարպետն անցավ իր գործնական աշ-
խատանքին...»:

4. «Մեր ցեխը կադմեց 10.000 հատ գիրք...»:

5. «Հինգ հոգի բանվոր գնացին...»

Այս նույն որինակները կարդացեք առանց ընդ-
գծած բառերի և կտեսնեք, վոր միտքը վոչ միայն
չի աղավաղվում, այլ և պարզանում, դյուրամբունե-
լի յե դառնում:

Վերջապես բերենք մի այսպիսի որինակ:
Թղթակիցը գրում է.

«Վերոհիշյալ խանութավարները խանութային
աշխատանքի ասպարիզում լավագույն ցուցանիշ-
ների յեն հասել չնորհիվ դեպի սպառողը ցույց
տված ամենորյա հոգատարութեան, ամենորյա
պահանջի ասպանքների անընդմեջ հայթայթման
ու ասպահովման, առաջնորդայն ձկնութեան
ցուցարեղելով ասպանքները պահանջի խանութ-
ները տեղափոխելու դործում, խանութների աշ-
խատանքի ժամերը սպառողի պահանջներին հար-
մարեցնելով»:

Յեթե այս հոդվածի հեղինակին առաջարկենք
մի չնչում կարդալ այս նախադասութեանը, նա կես
ճանադարհին կանդ կառնի ու կասի.

— Ներեցեք, չունչս կարվում է, չեմ կարող:

Բայց, միթե՞ ընթերցողի չունչն անսպառ է:
Ինչո՞ւ վո՛չ հոդվածագիրը, վո՛չ խմբագիրը չեն
մտածում ընթերցողի մասին: Միթե՞ չի կարելի այո
նախադասութեանն ասիելի համառոտ, ասիելի պարզ
արտահայտել: Մի՞թե չի կարելի մի քանի մասի
բաժանել այն, վորպեսզի ընթերցողը չնչապառ
չլինի:

Փորձեցե՛ք ինքներդ անել այդ և կանսնե՛ք, վոր
հնարավոր է :

Ահա թե ինչ խնդիրներ պիտի նկատի ունենալ
թղթակցություններն ուղղելիս :

ՄԵԶԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաղիվ թե լինի մի թերթ, վորը մեջբերում-
ներ չանի, այսինքն՝ հոգւածների թղթակցություն-
ների մեջ քաղվածքներ չբերի Լենինի, Ստալինի և
կուսակցութեան ու կառավարութեան մյուս ղեկա-
վարների հոգւածներից ու ճառերից, կուսակցական
ու կառավարական վերադաս օրգանների վորոշում-
ներից և այլն : Ուստի, վաստ չի լինի մի քանի խոսք
ասել այդ մեջբերումների մասին :

Տեղին ոգտադործված մեջբերումը նպաստում է
խնդրի պարզաբանմանը, քաղաքական ճշտորոշու-
թյուն է տալիս նրան և ավելի համոզիչ է դարձնում :
Սակայն անթույլատրելի չե՛, յերբ շատ տեղերում
այդ մեջբերումները կատարում են կիսատ-պուատ և
աղավաղումներով : Նման դրությունից խուսափելու
համար մեջբերում անելիս պետք է ղեմել վոչ թե
հիշողութեան, այլ սկզբնաղբյուրին :

Մեջբերում անելիս վորոշակի պիտի նշել աղ-
բյուրը—հեղինակը, գիրքը, էջը, թերթի անունը,
համարը, հոգւածի վերնագիրը և այլն :



Այս բոլորից մենք դալիս ենք նույն յեղրակացու-
թեան, ինչ վոր ասել եյինք սկզբում.—թղթակցու-
թյունն ուղղելը պատասխանատու, լուրջ գործ է և
չի կարելի հանձնարարել անփորձ մարդու :

ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԶԱՓԸ

Տպւած թերթն ընթերցողը ձեռքն եւ առնում, բռնում եւ ցանկացած հեռավորութեան վրա, ծալում եւ յերկու տակ, չորս տակ, կարդում եւ նստած, պառկած, նույնիսկ քայլելիս: Չնայած դրան, հաճախ ընթերցողները տրտնջում են, թե այսինչ թերթի չափն անհարմար եւ կարդալու համար: Նշանակում եւ, պատի թերթի չափի նկատմամբ ասելի խռտապահանջ պիտի լինել, վորովհետեւ այդ թերթն անչարժ եւ, վոչ ծալել կարելի չեւ, վոչ աչքին մոտեցնել, վոչ հեռացնել եւ կարդացվում եւ վանդնած վիճակում:

Ի՞նչ պահանջներն պիտի համապատասխանի պատի թերթի չափը:

Ամենից առաջ, պատի թերթը, վորպէս կանոն, մեծ չափի չպետք է լինի: Յեթե չի կարելի պատի թերթն ընթերցողի ձեռքը տակապա դնել ընթերցողին չպետք եւ ստիպել, վոր թերթը կարդալիս «ճանապարհորդութիւն» կատարի մի ծայրից մյուսը: Թերթի մեծութիւնն այնքան պիտի լինի, վոր ըն-

թերցողն իր տեղը կանգնած կարողանա կարդալ բոլոր սյունակները: Փորձը ցույց եւ ասել, վոր պատի թերթի ամենահարմար չափը մեկ թերթ ստւարտ-թղթի (կարտոն) կիսի չափն եւ:

Այն եւ պիտի նկատի ունենալ, վոր փոքր չափի պատի թերթը միշտ եւ ասելի աշխույժ եւ լինում ու առորյա հարցեր եւ շոշափում: Մինչդեռ, յեթե պատի թերթի չափը մեծ եւ լինում, մինչեւ համապատասխան չափով նյութ հաւաքելը յերկար ժամանակ եւ անցնում եւ նյութերի մի մասը հնանում, կորցնում եւ իր արժեքը: Փոքր չափի թերթն, ընդհակառակն, կարելի չեւ շուտ-շուտ բույս ընծայել եւ նրա մեջ միշտ թարմ, ժամանակին շոշափող հարցեր կլինեն:

Պատի թերթը պետք եւ կրկնել մարդու հասակի բարձրութեամբ. պետք եւ հաշիւ արձեւել, վոր ընթերցողը վերել տողերը կարդալու համար վրդը չձգի եւ ցածի տողերը կարդալիս ստիպւած չլինի կուչ գալ, վկզել:

ԱՆՈՒՆԸ ՅԵՎ ԼՈՉՈՒՆԳԸ

Բնականաբար, առաջին իսկ հայացքից թերթի անունն եւ ընկնում ընթերցողի աչքին: Յեւ հենց անունից եւ ընթերցողը վորոշ ստավորութիւնն եւ ստանում թերթից:

Խմբագրական կողմից ինքն եւ ընտրում թերթի չափը, անուն տառերի մեծութիւնը, վորոշում եւ անունը, նկարագրաւորւած տալ, թե՞ պարզ տառ-

բով: Այս ամենի մասին հաստատորեն առհմանված կանոններ չկան: Կասենք միայն այն պարտադիր պա հանձները, վորոնց պիտի համապատասխանի թերթի ճակատը:

Անոնը պետք և գրված լինի պարզ, հնարավորին չափ գեղեցիկ, բայց առանց խճողումների, վոր պետքի հեշտ լինի կարգավը:

Թերթի ճակատին, բացի անունից, նշված պիտի լինի, թե վոր ցեխինն և և վորտեղ և լույս տեսնում:

Անպայմանորեն նշված պիտի լինեն թերթի համարը, լույս տեսնելու օրը, ամիսը, տարեթիվը:

Այս ամենը թերթի ճակատում պիտի տեղադրուել հարմար ու գեղեցիկ:

Ոմբադիրները հաճախ հարցնում են. թերթի ճակատը մշտակա՞ն պիտի լինի, թե ամեն անգամ նորը պիտի նկարել:

Դա կախված և նրանից, թե իմբադրությունն ինչ ուժեր ունի իր արամադրության տակ: Յեթե նկարիչ-բանթղթակիցներ քիչ կան և ճակատ պատրաստելը կուշացնի թերթի լույս ընծայումը, ավելի լավ և ոգտադործել մշտակա՞ն ճակատ, ամեն անգամ փոխելով միայն համարն ու թվականը: Իսկ յեթե նկարողներ շատ կան, կարելի չե յուրաքանչյուր համարի համար նոր ճակատ պատրաստել: Այս դեպքում ել մենք խորհուրդ ենք տալիս հիմնականում պահել տառերի նույն ձևն ու վոճը և փոխել միայն ճակատի դասավորությունն ու գույնը:

Կարելի չե թերթի ճակատը պատրաստել ստվա-

րաթղթի վրա և ամեն անգամ նկարել տարբեր գույնով: Այսպիսով թեև կստացվի միանման ճակատ, սակայն գույների տարբերությունը միշտ նոր թարմություն կստեղծի և ավելի կհետաքրքրի, կշրջվի ընթերցողին:

Վորպես օրինակ տալիս ենք մի թերթի ճակատի տեսքը ստվարաթղթի վրա:



Դուրս կտրած տառերի տեղը վրձինով քաշում և ցամկացած գույնը, տաքցվում են գունավոր տառեր: Համապատասխան տեղերը գրվում են համարը, որը, ամսաթիվն ու տարեթիվը, վո'ր ցեխի թերթն և և այսպիսով ամեն անգամ ստացվում և նույն ճակատը տարբեր գույնով: Այս ձևով թերթի ճակատը չատ հեշտությամբ ու արագ և պատրաստվում: Կարելի չե նույնիսկ տառերի մի մասը մի գույնով ներկել, մյուս մասը ուրիշ գույնով, կամ ճակատի մի մասը մի գույնով, մյուս մասը՝ ուրիշ և այլն:

Մի քանի խոսք վերնադրերի ու լողունների մասին: Հասկանալի չե, վոր վերնադրերն ու լողունները տեքստի տառերից մեծ տառերով պիտի գրվեն,

տակարան վո՛չ աշխարհ մեծ, վոր «ճնշեն» տեքստը: Իսկ, վորպեսզի վերնադիրը, կամ լողունդն ավելի լավ աչքի ընկնի, կարելի յե գրել գունավոր տառերով, կամ տակը դիծ քաշել: Յերբեմն նույնիսկ կարելի յե վերնադիրը շրջանակի մեջ առնել:

Լողունդը կարող ե տարածված լինել ամբողջ թերթի ճակատով, կամ մի քանի սյունի, նույնիսկ մեկ սյունի լայնությամբ: Նայած թե լողունդը վորքան նուրբ յե վերաբերում: Սակայն բոլոր դեպքերում պետք ե խոստովել հենց տեքստի մեջ, նրա հակառակ ուղղությամբ գունավոր տառերով լողունդ գրելուց. այդ ամեննին գեղեցիկ չե ե դժվարացնում ե թերթի ընթերցումը:

ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ՏԵԲՍՈՐ

Շատ պատի թերթերի խմբագիրներ կարծում են, թե թերթն անպայման պետք ե գրամեքենայով տպագրելի: Բնականաբար նրանք իրենց սեփական գրամեքենան չեն ունենում, չարունակ դիմում են ցեխի ղեկավարին, կամ գործարանային թերթին, իսկ այնտեղ հաճախ թերթի տպագրությունը ձգձգվում, ուշանում ե:

Ի հարկե, մենք չենք ժխտում, վոր մեքենադրած թերթը, մանավանդ յեթե պարզ ե մեքենադրած, ավելի դյուրին ե կարդացվում, քան ձեռագիրը: Սակայն այդ չի նշանակում, թե մեքենադրելու համար թերթի լույս ընծայումը կարելի յե որբերով ու-

շացնել: Պետք ե հիշել, վոր ձեռագիրն ել, յեթե մաքուր, խնամքով ու պարզ ե գրված, լավ ե կարդացվում ե յերբեմն ավելի լավ, քան մեքենադրածը: Բերենք ձեռագիր թերթի մի որինակ:

Մայագրական ցեխը հոկտեմբեր
ամսվա պլանը կատարեց 128 տոկոսով
Մոսկվայի տպագրական զորքոր
Մարգարայն Լիսա ճակագրայն և
Սուրեն Եսեքայայն նոր դիրքեր
գրավեցին նրանք իրենց ամսական
պլանները կատարեցին 300-
350 տոկոսով և այլն

Այս ձեռագիրն իր դյուրամտնելիությամբ ամենեին հետ չի մնում մեքենադրածից, վորովհետե տառերը համաչափ են, պարզ, առանց մաղադների ու ավելորդ ծածուկների: Ի հարկե, լավ ե, յեթե ձեռագիր տառերը գեղեցիկ են, սակայն շատ խմբագիրներ ձգտելով տառերի գեղեցկության, իրենցից տառերի նոր ձևեր են հնարում հաղար ու մի ավելորդ պոչերով, վոր ընթերցողը փոխանակ արագ կարդալու, սկսի գուշակություններ անել թե ինչ տառեր, ինչ բառեր են գրված: Շատ մանր տառեր ել չպիտի գրել, պիտի հիշել, վոր պատի թերթը կար-

դաստիարակում և կանոնադրում և չի կարելի աչքերին մոտեցնել:

Թերթի նյութերը (տեքստը) պետք է դրել սեթանաքով, կամ տուչով, վորովհետև դունավոր Թանաքով դրվածը շուտ է հոգնեցնում ընթերցողի աչքերը: Որոհուրդ չի տրվում նաև դրել դունավոր թղթի վրա:

Նյութերը խիտ չպետք է դրել, տողերն իրարից հեռու պիտի լինեն, սյունակների արանքներում ել բավական տեղ պիտի թողնել և դժեր քաշել:

ՆՅՈՒԹԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

Մեծ նշանակություն ունի թերթի նյութերի ճիշտ դասավորումը: Շնորհիվ դասավորված նյութերն ավելի մեծ հաճույքով են կարդացվում, վորովհետև թերթն ավելի գրավիչ է լինում:

Ի հարկե, նյութերի դասավորության համար հաստատուն կանոններ չկան, այդ կախված է խմբագրության ըմբռնողությունից ու ճաշակից: Սակայն պետք է նկատի ունենալ հետևյալ հանդամանքները.

1. Կարևոր հոդվածներն ու թղթակցություններն ավելի աչքի ընկնող տեղ պիտի լինեն:
2. Նյութերի դասավորման մեջ պարզություն պիտի լինի, այսինքն՝ նյութերը չպետք է խճողվեն:
3. Նյութերն այնպես պիտի դասավորվեն, վոր ընթերցանությունը հեշտ լինի:

Այս պայմանները պահպանելու համար թերթը պետք է բաժանված լինի հավասար չափի սյունակներով: Սյունակների թիվն ու լայնությունը կախված է խմբագրության հալեցողությունից, սակայն պիտի հիշել, վոր շատ լայն սյունակները նպատակահամար չեն, վորովհետև ստացվում են յերկար տողեր, վորոնց կարդալը դժվար է: Լավ է, վոր սյունակների լայնությունները հավասար լինեն իրար: Վորևե նյութ ավելի ակնբախ դարձնելու նպատակով կարելի չի ավելի լայն սյունակում տեղադրել, սակայն այդ դեպքում պիտի դրվի ավելի խոշոր տառերով:

Շատ յերկար նյութերը մի սյունակում տեղադրելը լավ չէ. ավելի հարմար է այդպիսի նյութերը բաժանել 2-3 հավասար մասերի և յերկու-յերեք սյունակում տեղադրել:

Կան թերթեր, վորոնք, մանավանդ տոնական օրերին, նյութերին զանազան ձևեր են տալիս: Այդ վոչ միայն չի դեղեցկացնում թերթը, այլ և դժվար ընթերցելի չի դարձնում:

Յեթե անհրաժեշտ է, վոր այս կամ այն թղթակցությունն ավելի ուժեղ աչքի ընկնի, կարելի չէ ավելի խոշոր տառերով գրել, ավելի սիրուն տառերով գրել, կարելի չէ, ինչպես վերն ասացինք, ավելի լայն սյունակում գրել, կամ շրջանակի մեջ առնել և այլն:

ՆԿԱՐՆԵՐ ՅԵՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Թե՛ տպագիր թերթերը և թե՛ պատի թերթերը զարդարվում են նկարներով ու լուսանկարներով:

Պրահեք վոչ միայն հաճելի յեն ընթերցողի համար,
այլ և լրացնում են նյութերի բովանդակությունը,
յերբեմն նույնիսկ առանձին թղթակցության, առան-
ձին նյութի դեր են կատարում:

Բոլոր պատի թերթերը յերբեմն-յերբեմն, մանա-
վանդ հեղափոխական տոն որերին տեղավորում են
մեր առաջնորդների ու ղեկավարների նկարները:
Սակայն յերբեմն պատահում է, վոր թերթերը տե-
ղավորում են հասցեայ ու անհաջող պատրաստած
նկարներ: Այդ բանի նման է: Յեթե խմբելով լավ
նկարող մարդ չունի, պետք է տեղավորի լուսանկար-
ներ, կամ թերթերից ու ժուռնալներից կտրած մա-
քուր նկարներ:

Ընդհանրապես շատ քիչ պատի թերթեր կան,
վորոնք լուսանկարներով լրացնում են իրենց նյութե-
րը: Մինչդեռ ներկայումս ամեն տեղ կան ֆոտոսի-
րողներ, վորոնց կարելի չէ ոգտադործել և լուսանկար
ներ ստանալ տվյալ ցեխի կամ դործարանի կյանքից:
Ինչո՞ւ, որինսկ, չի կարելի տեղավորել լավագույն
ստախանովականների, ուսման հարվածայինների,
հատարական աշխատանք կատարողների նկարնե-
րը: Նոր դադեյահաները, նոր արտադրանքը, խոտա-
նը՝ խստանադարի հետ և այլն—այնպիսի նյութեր
են, վորոնք կարելի չէ լուսանկարել ու տեղավորել
պատի թերթում:

Լուսանկարներին կարելի չէ վորոչ ձևեր տալ—
ձվաձև, շրջանաձև, չեղանկյուն և այլն: Կարելի չէ
նրանցից մոնտաժներ անել:

Կարելի չէ ոգտադործել նաև ուրիշ տպագիր
թերթերից ու ժուռնալներից կտրած նկարներ: Սա-
կայն այդ պետք է անել տեղին ու նպատակահարմար
ձևով: Նկարը թերթում չի տեղավորվում վորպես
սոսկ նկար, զարդարանք: Նա իր բովանդակությամբ
պիտի կապված լինի թերթի ընդհանուր բովանդա-
կությանը և մի վորևե նպատակ պիտի հետապնդի:

Միանգամայն աններելի չէ վորևե նկար տեղավո-
րել առանց բացատրության: Ի հարկե, խոսքը չի
վերաբերում այն նկարներին, վորոնք կատարված են
հատկապես այս կամ այն նյութի համար և նրա
հետ միասին տեղավորվում են թերթում ու առանց
բացատրության ել հասկացվում են:

Այսպես ուրեմն—պատի թերթի ձևավորումը,
նյութերի ու նկարների դասավորումը կարևորագույն
գործ է, վորին պատասխանատու չեն վոչ միայն
նկարիչ-ձևավորողը, այլ և խմբիչը և անձամբ խլմ
բազիրը: Յեթե նույնիսկ մի կողմ թողնենք արտա-
քին գեղեցկութունն ու դյուրընթեռնելիությունը,
չպետք է մոռանալ, վոր թերթի նյութերի ու նկար-
ների անհարմար, չմտածված դասավորությունը կա-
րող է նույնիսկ քաղաքական կոպիտ փխալի հասցնել:
Դրա համար ել պատի թերթի խմբադիրը, յեթե
նույնիսկ նախորդ կարգացել է բոլոր նյութերը, տե
սել է նկարներն ու թերթի ձևավորման նախագիծը,

դրանով չախտի դժհանա: Նա պետք է թերթը վերջ-
նականնայնս պատրաստելուց հետո մի անգամ ել ու-
շի ուշով դիտի, ուսումնասիրի այն, նոր միայն լույս
ընծայի:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԽՄԲԱԳԻՐԸ ՅԵՎ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻԱՆ .	6
2 ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ՊԼԱՆԸ	20
3. ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՆՐԱՆՑ ՄԵՋ	30
4. ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒՄՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ Ուղղումը պատասխանատու գործ է	42
Ուղղել, բայց չաղավաղել	45
Ժողովրդական մաքուր, պարզ լեզվի համար .	48
Զչարաշահել ոտար բառերը	49
Անհիմն կրճատումների մասին	50
Գրասենյակային վնն	52
«Թվեր կարդալը դժվար է»	53
Տեղի՞ն է այս բառը	54
Ավելորդ բառեր	56
Մեջբերումների մասին	58
5. ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ Պատի քերթի չափը	60
Անունը և լոգումբը	61
Ինչպե՞ս գրել տեկստը	64
Նյութերի դասավորումը	66
Նկարներ և լուսանկարներ	67





39

14970

ՀԵՏԵՐՈՒՄ Ե ՁԵՐ

ЦЕХОВАЯ СТЕННАЯ ГАЗЕТА

Составил и редактировал

А. ПЕТРОСЯН

Издание ЦККП(б)А «Хорурдаи» Айастан